

ԵՆԵՐԶ

7-8

(214-215)
Հունիս-օգոստոս 2024



ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐԵՐ ԳԱՆՁԱՅՈՒՄ



Հունիսի 21-ին հայ մեծանուն գրող Վահան Տերյանի ծննդավայրում Վրաստանի Նինոծմինդա մունիցիպալիտետի Գանձա գյուղում, տեղի է ունեցել մեծ բանաստեղծին նվիրված «Տերյանական օր» տոնակատարությունը:

Միջոցառմանն իր խոսքում Վրաստանում 77 դեպքում Աշոտ Սմբատյանը ողջունել է արդեն ավանդական դարձած տոնակատարության անցկացումը Վրաստանում՝ կարևորելով մանաստիպ նախաձեռնությունների նշանակությունը հայ-վրացական հասարակական և մշակութային կապերի ամրապնդման հարցում:

Տոնակատարությանը մասնակցել են նաև Վրաստանի Սամցխե-Ջավախեթի շրջանում Վրաստանի կառավարության ներկայացուցչի տեղակալ Դավիթ Վարդիաշվիլին, ՀՀ ԱԺ պատգամավոր Շիրակ թողարկման, Նինոծմինդայի քաղաքապետ Անիվարդ Մոսոյանը, Հայաստանի գրողների միության պատվիրակությունը, բազմաթիվ հյուրեր Հայաստանից և Վրաստանից:

Միջոցառման շրջանակներում հյուրերն այցելել են Գանձա գյուղում գտնվող Վահան Տերյանի տուն-թանգարանի ցուցասրահ, ներկա գտնվել Սուրբ Կարապետ եկեղեցում մատուցված պատարագին, որին հաջորդել է համերգային ծրագիրը:

Ամեն անգամ, երբ լինում են տերյանական տարածքներում, այս շնչնկացող զեփյուռը բանաստեղծական տողեր է բերում իմ ունկերին: Մեխմաղձոտ, բայց և խրոխտ տողեր: Սրտի զարկի պես համաչափ, բայց և սրտխփոցի չափ ճշմարիտ և հատու տողեր:

Տերյանական տարածքներով անցնելիս միշտ էլ ինչ-որ կախարդանքով տեղափոխվում են տերյանական ժամանակներ՝ մաքրամաքուր, նախապետական, ի վերջո՝ ազգային:

Ես այսօր ամեն մի գանձացու աչքերի մեջ տեսա Տերյանի արտացոլանքը, յուրաքանչյուրի շուրթերի բացուխտվող Տերյանի չքնաղ բանաստեղծության ելեղը հասցրեց իմ ունկերին, իսկ հոգին... Տերյանի հոգին պարզապես սավառնում է այս կողմերում:

Ո՞րն է տերյանական օրերի խորհուրդը. փորձեն պատասխանել ինքս ինձ.

Տերյանը, Թումանյանը, Իսահակյանը, Չարենցը, մեր մյուս մեծերը մշակութային այն հիմքերն են, որոնց վրա բարձրանում և իմաստավորվում է մեր ապրած և ապրե-

լիք ժամանակը: Եթե մենք մեր մեջ կրում ենք հոգևոր, ուրեմն խորապես ապրում ենք, շնչում: Եթե հոգևորից դուրս ենք, մենք պարզապես էակներ ենք՝ մոռացված անցյալով, դատարկ ներկայով և առանց տեսլականի:

Մեծերի հետ յուրաքանչյուր շփում մեր կյանքին ազդակ է տալիս, վերափոխափոխում է մեր ապրած ժամանակը: Իսկ մենք արդյոք հաճախ ենք շփվում մեր մեծերի հետ, չգիտեմ. թող այս հարցը մեզանից յուրաքանչյուրը տա իրեն: Ահա այստեղ է տերյանական օրերի խորհուրդը. և մեկ անգամ շփվել անաղարտի հետ, քայլել այն հողի վրայով, որ հարյուր ու էլի տասնյակ տարիներ առաջ սրբագործել է մեծ բանաստեղծն իր ոտնահետքերով, շնչել այն օդը, որն իր շերտերում կրում է Տերյանի չընդհատվող շնչառությունը:

Ուրեմն երիցս փառք նրան, ով մտահղացել է մկրտել հուլիսյան այս կիրակին տերյանականի, և փառք այն ժողովրդին, որ պահում, պահպանում է այս հոգևոր տոնը ժամանակի հողովույթում:

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վարդավառի կիրակին էր, մի պայծառ օր: Գնացիք Գանձայից ոչ շատ հեռու ս.Ղովանցեսի մատուռը, որը ուխտատեղի էր:

Ես ու Վահանը մտել էինք մատուռի տակ, ծխում էինք ու դիտում պարողներին և քեֆ անողներին:

Վահանի լեզուն բացվել էր, այլևս չէր քաշվում ինձնից:

Մյուս օրը առավոտյան գնացիք տեսնելու Փարվանա լիճը: Բարձրացանք մի բլրակի վրա, որը իշխում էր շրջակայքին: Վահանը հափշտակված նայում էր՝ հայացքը թափառելով ամեն կողմ, և արտասանեց յուրովի Յ. Թումանյանի «Փարվանայից».- Նայի՜ր, -ասում էր Վահանն ինձ, - ա՛խ, ի՛նչ տխուր աչքեր ունեն մեր գյուղացիները, ի՛նչ մտահոգ դեմքեր՝ արևով, անձրևով այրված ու բովված: Ի՛նչ դառն աղքատություն է կաթուն վրաներից, բայց ուրախանում են: Բայց ի՛նչ թախծոտ ուրախություն է այս: Իբրև թե ուրախ երգեր են երգում, բայց ինչքա՛ն վիշտ ու մորմոք կա սրանց ուրախ երգերի մեջ: Դարերի տառապանքն է խոտում սրանց բերանով: Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ո՞ր մնաց օտարը: Մեր նոր գրողներից Թումանյանը և դու, միայն երկուսդ, զգում եք մեր ժողովրդին: Ձեզնից հետո կամ նոր, բոլորովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լռել:

-Շատ են սիրում իմ բարձրագույն հայրենիքը և նրա խոնարհ ժողովրդին, որ աշխատում է ու երազում, տքնում է ու երգում...
«Այս պատանու հոգին,- մտածում էի ես,- պարուրված է երազով, ինչպես իր հայրենի լեռներն ու լճակները՝ կապույտ մշուշով...»:

Եվ այս սրտազին գրույցներից այն խորին տպավորությունն առա, որ ես բանաստեղծական էության հետ գործ ունեմ, որ այս զգայուն հոգում ապրումները մթին խորության մեջ են կատարվում, որ նա աշխարհը զգում է երազներով և երազների մեջ:

Անցնելի կենդանի են իմ հոգում այն քնքուշ երեկոները և ամոթոք գիշերները, որ ապրել են Վահանի մայրենի գյուղում, պատանի Վահանի հետ միասին:

1906 թվին, հունվարին, Վահանին և իր դասընկերոջը հանդիպեցի Թիֆլիսում: Հեղափոխական հուզումնալից իրադարձությունների հետևանքով ժամանակավորապես զոցված էր Լազարյան ճեմարանը, ուստի նրանք վերադարձել էին Կովկաս: Նրանք ուզում էին հեղափոխական աշխատանք, պրոպագանդ տանել ժողովրդի մեջ: Ընդառաջելով նրանց փափագին, որոշեցի նրանց հետ տանել Ալեքսանդրապոլ (Լենինական) և ուղարկել Շիրակի գյուղերը, որպեսզի ժողովրդին բացատրեն Ռուսաստանում տեղի ունեցող անցքերը:

Այսօրվա պես հիշում եմ. - Վահանն ու դասընկերը՝ ահագին, սև ծոպավոր փափախները գլխներին ոգևորված վագոն նստեցին:

Ալեքսպոլում հաճախ լինում էին նրանք ինձ մոտ, ես էլ նրանց մոտ, հյուրանոցում: Մինչև ուշ գիշեր գրույց էինք անում, բայց ոչինչ չէմ հիշում հիմա այդ գրույցներից: Միայն երկու դեպք են վերհիշում:

Մի երեկո Վահանի ընկերը ինձ ասաց, թե Վահանը բանաստեղծություններ է գրում: Վահանը դողդոջ ծայրով կարդաց մի քանի հատ: Բնավ չհավանեցի, դժգույն բաներ էին, մեծ մասով իմ ոտանավորների, Թումանյանի և ուրիշների նմանություններ:

Բանաստեղծական տրամադրությամբ լցված մի երիտասարդ, լավագույն կերպով պատրաստված, տեղյակ էին ու նոր գրականության... և այսպիսի թույլ բաներ: Շատ հիասթափվեցի: Վահանը դեռ իրեն չէր գտել. հրաշքը դեռ տեղի չէր ունեցել:

Երկրորդ վերնուշու այս է:

Նրանք գյուղերը շրջելիս, եղբորս մոտ հյուր էին եղել Դազարապատ գյուղում. այնտեղից էլ ձմեռ օրով գնացել էին Անի:

-Անսահման գեղեցիկ է Անին,- ասում է Վահանը: Եվ իրոք, Անին իր ճարտարապետական հուշարձաններով ազդել էր նրա մտքի և երևակայության վրա:

1908 թվին, ամռանը Թիֆլիսում պատահեցի Վահանին: Պիտի հրատարակել իր բանաստեղծությունների առաջին գրքույկը՝ «Մթնշաղի ամուրջները»: Տպելուց առաջ Յ. Թումանյանի մոտ կարդացել էր ձեռագիրը, ուզեց ինձ մոտ էլ կարդալ՝ «անկեղծ կարծիքս» իմանալու համար: Հյուրանոցիս սենյակում ենք: Հուզված կարդում է ոտանավորները, մեկը մյուսի ետևից. քանի առաջանում է ընթերցումը, ավելի է հուզվում. ես սրտով և ուշով հետևում եմ ընթերցումին: Տեսրակը չավարտած՝ ես անհամբերությունից մղված գոչեցի. «Կեցցե՛ս, Վանիկ ջան, հրաշալի բաներ են, բյուրեղացած զգացումներ՝ անթերի ձևերի մեջ: Իսկական քնարերգությունը սա է՝ մաքուր լիրիկա»: Չարմացա, որ նախորդ ոտանավորներից այստեղ չկար:

Վահանի ներհուն աչքերը փայլատա-



կեցին ուրախությամբ: «Հ.Թումանյանն էլ շատ հավանեց: Երկուսիդ կարծիքը բացարձակ արժեք ունի ինձ համար: Այլևս քննադատությունից վախ չունեմ»:

Երեկոյան եղա Յ. Թումանյանի մոտ և հիացմունքս հայտնեցի Վահանի բանաստեղծությունների նկատմամբ:

-Հա է՛, շատ դուրստ ես ասում: Շատ գեղեցիկ են և գրեթե մեր լիրիկայի մեջ բուրրովին նոր բաներ: Պատկերները թեև թույլ են և քիչ, բայց լեզուն՝ մաքուր գտված և արժաթե զանգի պես հնչում: Իմ ազդեցությունը բնավ չտեսա այնտեղ, բայց քո և Դերեցիկի տրամադրությունների արձագանքը կարծես կա, մանավանդ՝ քո: Դու ի՛նչ ես կարծում, համեմայն դեպի՝ մեր Վերնատան մեջ պատվավոր տեղ ունի...

Երկու տարվա ընթացքում հրաշքը կատարվել էր, Վահանը գտել էր իրեն և արվեստի գաղտնիքը: Վահանի երևումով մեր քնարերգության մեջ մի նոր էջ բացվեց: Վահանը հաճախ գրում էր ինձ Մոսկվայից: Հայտնում էր իր ծրագրերի, իր գրածների և գրելիքների մասին:

1909 թվին, ամռանը, Ախալքալաք գնալիս Վահանը կանգ առավ Ալեքսպոլում, մի քանի օր ինձ մոտ հյուր մնալով՝ կարդաց իր նոր գրած «Ոսկի հեքիաթ»-ը: Ես էլ գրել էի «Աբու-Լալա Մահարին», ցույց տվի նրան, հավանեց և մի քանի նկատողություններ արավ: Նրա խորհրդով նախերգանքի մեջ՝ Մահարու հակիրճ կենսագրականում, փոփոխություն մտցրի, որ մինչև այսօր էլ չգիտեմ լավ արեցի, թե վատ:

Ավելորդ չեն համարում մեջ բերել այդ: Գրել էի այսպես. «Եվ մի գիշեր, երբ շատ լքված էր նա և սրտաբեկ, դուրս հանեց երևակայության միջից քաջազնաց ուղտերի մի քարավան՝ ընտիր սարքով, և մինչև Բաղդադը բուն էր մտել Տիգրիսի նոճիածակ ափերի վրա - գաղտնի հեռացավ քաղաքից...»:

Վահանը գտավ, որ սա շատ անհրապեհ կթվա, շատ անհամոզիչ: Եվ, ուրեմն, իբրև թե ավելի համոզիչ կլինի, եթե Մահարին իրական քարավան ունենա:

Այս տեսակցությունը, դժբախտաբար, վերջինը եղավ. էլ չտեսանք իրար. Ռ՝վ կարող էր երևակայել, թե այս հազվագյուտ տաղանդն իր ստեղծագործական փթթումի պահին պիտի թողնի մեզ...այսպես վաղաժամ»:

ԱՎԵՏԻԲ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ հուշերից

ԶԲՄՈՒԿՆԻ



Անահիտը անթարթ նայում էր ճանապարհին՝ ասես անհամբեր սպասելով ինչ-որ կարևոր լուրի: Նրա շնչառությունը կտրուկ էր, գանգուր մազերը ավելորդ վուն էին քամուց ու գալարվելով հավում մուրթ դիմագծերով դեմքին: Կնոջ ամեն մի բջիջը լարված էր ու անհանգիստ: Երկար բաթանե զգեստը ծածկել էր պիրկ ու սլացիկ մարմինն ու դարձյալ փողփողում էր՝ մի պահ հիշեցնելով՝ Սանդրաքեյան Նիկեի ուրվագիծը: Գոտկատեղից կախված հեռախոսի գանգը սթափեցրեց ու ճիհից հանեց կնոջ: Անագը երկար սպասված էր. թուրքիայի դեսպանատնից վիզայի թույլտվությունը տրված էր, ու այժմ նա, առավել քան երբևէ, մոտ էր իր երազանքի իրագործման ճանապարհին...

Տարիներ շարունակ նրան հետապնդել էր մի երազ. կլոր հատակագծով կառույցի կենտրոնում շրջանաձև մատած էին ութ հաղթանդամ տղամարդիկ. բոլորը մինչև գոտկատեղը իջնող եռանկյունաձև բացվածքով սպիտակ շապիկներով: Իսկ իբրև գոտի՝ ամեն մեկի մեջքը զարդարում էր կենդանական տոտեմի մի պատկեր՝ աղվեսի, վարազի, առյուծի, վիշապի, օձի, մողեսի, արջի, սագի (անկարելի էր չզարմանալ ու չհիանալ այդ առեղծվածային պատկերով): Տղամարդիկ ուշադիր հետևում էին կենտրոնական զոհարանին, որի վրա պառկած էր կինը՝ սպիտակ, ծյունաճերմակ մարմինը ծածկող խիտ, երկար մազերով: Նրա կուրծքը զարդարող մազերը հիշեցնում էր Մեծամորի տիեզերքի մանրակերտը (դա Անահիտը հասկացավ ավելի ուշ): Կինը տարուբերում էր գլուխը արտասանելով անհողաբաշխ բառեր, որոնք ուշադիր լսում ու գրի էին առնում նրա առջև ծնկաչոք տղամարդի ու նրա օգնականը: Կինը սկսում էր ողջ մարմնով ցնցվել, և օգնականը ծիսական թասով ջուր էր ցողում՝ հանգեցնելու կնոջ մարմնի կրակը, նրա թթվաքթերից հոտում էր արյուն, իսկ ճիչերը՝ մեկ հուժկու, մեկ էլ երեխայի հեկեկոցի նման քնքուշ, անտարբեր չէին թողնում և ոչ մեկին: Գալարվելով ցավից ու մեծ լարումից՝ Մեծ Քրմուհին վերջապես բացեց աչքերը, ու Անահիտը այդ պահին արթնացավ...

Խորհրդավոր պատկերը երկար ժամանակ հետապնդում էր նրան: Ամեն անգամ Անահիտը փորձում էր վերականգնել Քրմուհու (իսկ որ քարին պառկած մերկ կինը քրմուհի էր, Անահիտը տարակույս չուներ) արտասանած խոսքերը՝ ինչ էր մրմնջում կինը իր միստիկ երազների մեջ...

Տարիներ շարունակ միևնույն երազից սթափվելով՝ Անահիտը վեր էր թռչում քրտինքի մեջ ու փորձում էր հիշել Քրմուհու արտասանած բառերը: Նրա աչքի առջև հայտնվում էին ծերունիների դեմքերը, որոնք ուշիուշով ականջալուր էին Քրմուհու ծանր շնչառությանը ու արտաբերած ամեն մի խոսքին: Գետնից երազից երազ Անահիտին պարզ դարձան այդ մոգական խոսքերը.

«Գայլերը գալու են, ավերելու ու ոչնչացնելու են... հեռացեք, փրկվեք»: «Մեծ Արը...» ամեն անգամ նա չէր կարողանում վերհիշել Քրմուհու վերջին խոսքերը: Դա գիտնական կնոջ համար դարձել էր գլխացավերի ու մտատանջությունների առիթ:

1995 թվականն էր, երբ Անահիտը, սովորելով Հայաստանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության բաժնում, մասնակցում էր պեղումների, պրոֆեսոր Ֆելիքս Իվանովիչ Մարտիրոսովից հնագետ ու հայագետ մեծ գիտնականից, առաջին անգամ լսեց Գյոբեկլե Թեփեի (Պորտասարի հուշարձանի) մասին: Գերմանացի գիտնական Կլաուս Շմիդտի պեղումները Շանֆլիուրֆա (Եդեսիա) քաղաքից 15 կմ հեռավորության վրա, Սիրիայի սահմանակից տարածքում, մեծ ոգևորություն էին առաջացրել հնագետների մեջ՝ ստիպելով վերանայել մինչ այդ եղած պատկերացումները նախնադարի, մարդկային գիտելիքների վերաբերյալ: Մեզալիթյան հուշարձանը, որը գտնվում էր բլուրների վրա, բացահայտվել էր հողագործական աշխատանքների ժամանակ ու բավականին վնասվել մարդկային անփութության պատճառով: Երբ պարզ դարձավ հուշարձանի կարևորությունը, փորձ արվեց ծածկել, քողարկել այն, ինչպես արվել էր տասնյակ այլ հայկական մշակութային հուշարձանների դեպքում: Եվ այստեղ հենց Կլաուս Շմիդտի միջատնությունն էր, որ ոչ միայն խաթարեց թուրքական ծրագրերը, այլև Պորտասարը բացահայտեց աշխարհի համար: Հուշարձանի թվագրումը կատարվեց գերմանական սարքերով ու ճշգրտությամբ. միջին հնության շերտերի վաղեմությունը հասավ Ք. ա. 9600-8800 թթ.:

Անահիտը սովոր էր նայել ոտքերի տակ, զննել ամեն քարը, խեցին, կարդալ թաքնված նշանները, տարանջատել կարևոր երկրորդականից, փոխել դիտակետերն ու մտածել հիստորիկ... Անահիտի ակննջում դեռ հնչում էին Մարտիրոսովի բառերը. «Հայաստանում են թաքնված հնագույն քաղաքակրթությունների բանալիները: Մեզ դարձրեք շարունակ պարտադրել են կեղծ պատմություն: Կզան ժամանակներ, երբ մարդիկ կհասկանան ու կվերընթերցեն իրենց ծագման ու զարգացման պատմությունը: Եվ նրանք մորից կբացահայտեն Հայաստանը»...

...Անցան տարիներ: Հնագետը թռչում էր թուրքիա՝ մասնակցելու գիտաժողովին, որը տեղի էր ունենալու այն հուշարձանի մոտ, որ շարունակ հայտնվում էր նրա երազներում: Նրա սիրտը բաբախում էր ինչ-որ սպասումից, անբացատրելի հուզմունքից...

Այժմ կինը քայլում էր Ք. Թ. (Պորտասարի) հնավայրով. նրան արդեն ծանոթ էին յուրաքանչյուր քար, յուրաքանչյուր կենդանու պատկեր: Նա գնում էր իր երագի հետևից, որը տեսիլքի նման հետապնդել էր կնոջը տարիներ շարունակ: Նրան ուղեկցող թուրքական հատուկ ծառայության սպան ուշադիր հետևում էր Անահիտի յուրաքանչյուր շարժմանը: Հնագետ կինը հայտնվել էր երկու աշխարհների միջև: Երազն ասես իրականություն էր դարձել, իրականությունը երազ... Նա քայլում էր մեզալիթյան վիթխարի ուղղահայաց քարերի և կիկլոպյան շարվածքով պատերի կողքով, որոնք զարդարված էին բարե-

լիեֆի և գորելիեֆի տեխնիկայով արված կենդանապատկերներով և խորհրդանշական պատկերներով: T-անման մենհիրների վրա հստակ ուրվագծված էին թռչունների, առյուծների, ցլերի, կարիճների, օձերի, աղվեսների, վարազների պատկերներ: Ու թեև կառույցի ծագման և խորհրդաբանության վերաբերյալ կային բազում վարկածներ, սակայն և ոչ մեկը համոզիչ չէին թվում հաշվի առնելով հուշարձանի անսովոր բնույթը: Այսպես, Պորտասարի գլխավոր հնագետը, մարդ, որն իր կյանքի լավագույն տարիները մվիրել է Պորտասարի ուսումնասիրությանն ու հանրայնացմանը, կարծում էր, թե Պորտասարի բնակիչները կառուցել են պաշտամունքային հուշարձանի շրջանը, հետո, երբ այն կորցրել է իր «մոգական նշանակությունը», ծածկել են հողով ու ստեղծել նորը: Շմիդտը հուշարձանի մերձակայքում փնտրել էր մարդկային թաղումներ ու չի գտել, միայն խեցու կտորներ, սրանց մեջ պահված հեղուկով: Ավելի հավանական է թվում այն վարկածը, որ Պորտասարի բնակիչներն իրականացրել են ծես կամ մոգական գործողություն:

Սակայն թուրքական հնագիտական շրջանակների մեջ հանդիպում է անհիմախտական պաշտամունքի սրբավայր լինելու վարկածը: Վայրի կենդանիների պատկերող շինարարները եղել են որսորդներ, որոնց համար կենդանի պաշտամունքային նշանակություն է ունեցել: Նախնադարյան շինարարները մտակցության անցնելուց առաջ ստեղծել են իրենց կենցաղը հավերժացնող հուշարձան:

Անահիտը ուներ իր վարկածը, որը տարբերվում էր բոլորից: Նա գիտեր, որ շատ վտանգավոր է այն հանրայնացնելը և նրա մասին խոսելը թուրքիայում, հատկապես այս պահին: Եվ այդուհանդերձ, դա այն վարկածն էր, որը դառնվել էր նրա ուղեղում, և չէր թողնում նրան հանգիստ ասելու... Անգամ ֆիզիկական վտանգի սպառնալիքը նրան չէր սթափեցնում ու խոհեմություն պարտադրում:

Հնագետը հափշտակված լուսանկարում էր: Նրա համար ժամանակը կանգ էր առել: Ծանոթանալով պատկերները անցնում էին աչքերի դիմաց: Այս ամենը նա տեսել էր լուսանկարներով, տեսաֆիլմով, բազում անգամներ երազում հայտնվել էին այդ պատկերներն ու ինչ-որ բան փորձել հաղորդել նրան: Մի բանում էր համոզված կինը. նա այս հուշարձանի վերածանման գործում առաքելություն ունի: Այլ պարագայում անհիմաստ կղաճճան տարիների նրա հափշտակությունները, անցած ժամապարիզը, երազները, որոնումները... Սպան աշալուրջ հետևում էր կնոջ շարժումներին: Մի քանի անգամ նա գլուխը տարուբերեց՝ ցույց տալով, որ կինն անցնում է թույլատրելի սահմանները, և փորձեց կանգնեցնել նրան: Չուսպ Անահիտը այլևս իր տարբերքի մեջ էր. նա չէր ուզում ընդունել իրականությունը. նա տեսնեցել էր այս հանդիպումը, ու հիմա ինչ-որ մեկը ուզում էր թույլ չտալ նկարահանել իր երազների սկզբնաղբյուրը: Սպան, տեսնելով, որ կինը չի ենթարկվում իր հրահանգներին՝ կտրուկ խլեց, վայր նետեց նրա հեռախոսը և կոշիկով տորոբեց այն: Անահիտը սթափվեց և վերադարձավ իրականությանը. այնքան շատ ինֆորմացիա կար հեռախոսում... Վաղվա ներկայացման (պրեզեն-

տացիայի) նյութը ևս հեռախոսում էր... թեև կար նա թվայնացված տարբերակը, որը հյուրանոցի համարում էր... Ինչ-որ անհանգստություն անցավ նրա մտքով, և նա շտապեց վերադառնալ հյուրանոցի իր համարը: Դուռը բացելով՝ նա սարսափած կանգ առավ. համարը տակնուվրա էր արված, ճանապարհի իրերը դետուրեն էին նետված:

Ամենասարսափելին համակարգիչն էր, որը երկու մասի էր բաժանված, թվում էր, թե հատուկ գործիքով մասնատել են... Անահիտի 10 տարիների որոնումները, հողվածները, բազմաթիվ լուսանկարներն ու անտիպ գործը այդ համակարգիչում էին ու այժմ... Նա դուրս նետվեց համարից ու վազեց հյուրանոցի պատասխանատուի մոտ. վերջինս, լսելով աղջկա պատմությունը, անբաքույց զարմացավ, հետո զանգեց ինչ-որ մեկին ու ուսերը թոթվելով պատասխանեց. «Ես կես ժամ առաջ եմ եկել աշխատանքի: Հերթապահը լսել է ձայներ, սակայն դռան վրա եղել է «Խնդրում են չանհանգստացնել» գրությունը, և նա չի համարձակվել սենյակ մտնել: Ինչ վերաբերում է միջանցքի նկարահանող սարքավորումներին... շուրջ մի ժամ վթար է եղել հյուրանոցում: Բոլոր լույսերը անջատվել են: Նկարահանումն ընդհատվել է, ոչ մի բան չենք կարող անել...»

Գիտաժողովը սկսվել էր: Աշխարհի տարբեր կողմերից ժամանած գիտնականները հանդես էին գալիս ելույթներով: Անահիտի ելույթը նախատեսված էր ընդմիջումից հետո: Կինը ասես մոտիկ հեռու էր՝ էկզիստենցիալ հոգեվիճակի մեջ խորատուգված... Ելույթի նյութը ոչնչացված էր, հեռախոսն ու համակարգիչը վնասված էին... Տագնապալի անքուն գիշերվանից հետո նա ասես հանգստացել էր ու անբնական հանդարտությամբ պարուրվել: Երբ հնչեց նրա անունը՝ զեկուցման համար ամբիոնի մոտ իրավիճակը, կինը չարձագանքեց: Երկրորդ անգամ նրա անուն-ազգանունը տալուց հետո գիտաժողովի քարտուղարը մոտեցավ նրան ու կրկին հարցրեց. արդյոք պատրաստվում է ելույթ ունենալ, թե ոչ: Մի ամեհի սարսուռ անցավ Անահիտի մարմնով: Նա երկար էր սպասել այդ օրվան... Կինը բարձրացավ տեղից, դանդաղ ու հանդիսավոր մոտեցավ ամբիոնին, խոսեց դանդաղ, իրեն ոչ բնորոշ կոպիտ ու զրնգուն ձայնով. «Այո, գոյություն ունի մեկ համապարփակ հզոր ուսմունք: Հզոր, ինչպես բարձրագույն գիտակցությունը, հասարակ, ինչպես բոլոր բացարձակ ճշմարտությունները, և այդ ուսմունքը եղել է բոլոր մյուսների հայրը»: Մենք պիտի հիշենք, որ բաբելոնյան բոլոր աստվածներից գլխավորը՝ Էան, եղել է Իմաստության աստվածը, Ամրունդների և Լուսի աստվածը, և որ նա զուգորդվել է Օհանի կամ աստվածաշնչյան Դագոնի՝ Մարդաձեզան հետ, որը մարդկությանը ծանոթացրել է բոլոր գիտելիքների՝ բժշկության, աստղագիտության, ճարտարապետության, գրի, գինեգործության հետ: Օհանի՝ մարդաձեզան պատկերը՝ Պորտասարից հայտնաբերված կարևորագույն հուշարձաններից է:

Այդ քաղաքակրթական նշանակությամբ գիտելիքները Եդեսիա /Ուրֆա/ Շանֆլիուրֆա վայրից, որը դարձրեք շարունակ ընդգրկված է եղել «Հայկական լեռնաշխարհ» կոչվող աշխար-

հագրական տարածքում, տարածվել է Բալկանյան թերակղզի, Բրիտանական կղզիների, Պիրենեյան թերակղզի և այլուր: Այդ են վկայում Nature ամսագրում հանրայնացված ԴՆԹ-ի հետազոտության վերջին տվյալները, համաձայն որոնց՝ հայկական հապլոգախումբ R1b-ն դարձավ գլխավոր բնութագրիչ գենը ողջ Արևմտյան Եվրոպայի համար:

Պատմությունն ասում է, որ Փոքր Ասիայից մի ժողովուրդ եկավ Եվրոպա այնտեղ ապրող նախնիկ տեղացիներին վտարելուց հետո՝ իր հետ բերելով գյուղատնտեսության մշակույթ, անասնապահություն, արհեստներ, մետաղի մշակում, երկաթ, ծիերի, անիվի գյուտ, քաղաքների հիմնում: Այդ ժողովուրդը պատկանում էր R1b G2plogroup, որի բժօրքանը Հայկական լեռնաշխարհն էր: Դա հաստատվում է բրիտանացիների ամենահին քրոնիկոնում, որի առաջին էջում գրված է, որ նրանք եկել են Հայաստանից: Նույնը ասվում է Բավարիայի քրոնիկոնում: Դահլիճում անասելի աղմուկ բարձրացավ: Ներկաները սկսեցին աղմկել, այլևս խոսելը դարձավ անհնարին... Գիտաժողովի նիստի վարողը փորձում էր հանգստացնել ներկաներին: Մի քանի րոպեից, այնուամենայնիվ, նրան հաջողվեց հասնել փոքրիշատե լռության, որից օգտվելով պրոֆեսոր Տրեվերսը հարց հղեց Անահիտին.

- Դուք հասկանում եք, որ Ձեր հայտարարություններով փոխում եք ողջ պատմության ընթացքն ու դեպքերի շարադրանքը: Եթե բոլոր Ձեր ասածները ճիշտ են, ապա ինչու է դարձրել թաքցվել պատմության այս մեկնությունը: Մեկ րոպե լռությունից Անահիտը զգաց, որ դեպի իրեն են ուղղված բոլորի հայացքները: Տիրեց քար լռություն: Անահիտը բառ առ բառ պատասխանեց, նրա ձայնը արձագանքում էր դահլիճում, լսվում էր կնոջ սրտի բաբախը.

-Դրա պատճառը հետևյալն է՝ շումերական արձանագրությանը՝ իմաստությունն ու արվեստն ցած բերվեցին Արատտայից: Նույնը վկայում է Ելենա Բլավատսկայան՝ «Աստուհն Մասիս սարից վերցրին ու տարան Սինայ լեռան վրա մարդագրի»։ Նույնը ասում է Գրիգոր Նարեկացին՝ «Սայլը Մասիսի աջ կողմեն իջավ ճռճալեն և հասավ Երուսաղեմ»... Իսկ ավելի մանրամասն այդ թեմային կանդիդատական իմ հաջորդ զեկուցման ժամանակ:

...Ծանր օրից հետո Անահիտը ինքնաթիռով վերադառնում էր Երևան: Նրա մեջ հակասական զգացողություններ էին տիրում. վախ իր անձի ու ապագայի նկատմամբ, բայց և ներքին բավարարվածություն, կատարված մեծ գործի գիտակցում: Նրա աչքերը ծանրությունից փակվեցին. նա տեսավ տարիներ շարունակ ուղեկցող երազը...

Գալարվելով ցավից ու մեծ լարումից՝ Մեծ Քրմուհին վերջապես բացեց աչքերը, և արտասանեց մոգական խոսքերը. «Գայլերը գալու են, ավերելու ու ոչնչացնելու են... հեռացեք, փրկվեք»: «Մեծ Արը վերադառնալու է քրիստոսի դարաշրջանում, երբ կինը բացահայտի իր ուժն ու ճշմարտությունը, Արը վերադառնալու է ու Տեր է կանգնելու իր անցյալին, հզորությունը, զի տեղիքներին մարդկությանը ցույց տալով մոր ուղի ու ոսկեդար»...



ԱՆՔՍԱՆՈՐ
ՊՈՆՈՄԱՐՅՈՎ

ԽՍԼԸ

Ուրբն անտանելի ցավում էր: Սկզբում բուք ցավ էր, բայց ժամանակ առ ժամանակ ասես մախաթով ծակծկում էին բոլոր կողմերից, իսկ հետո հազարավոր չարքեր հանում էին երկբունակ սողոցն ու անցնում գործի: Անդրեյը խուլ հառաչեց: Հաղթահարելով ցավը՝ նա հանեց հատուկ վիրակապի փաթեթը, ատամներով պատռեց թաղանթն ու սկսեց անփութորեն կապկապել վերքը: Ուրբն ուռել ու կապտել էր: Ծնկից վերև բեկորային վնասվածքից առաջացած փոքրիկ անցքը կերպարան էր, երկաթե բեկորը ազդրի փափուկ հյուսվածքներում էր մնացել: Անդրեյը վիրակապում էր ուրբն այնպես, ինչպես սովորեցրել էին՝ վերևում ավելի ծիգ, ներքևը՝ թույլ: Բժշկական վիրակապերը լրիվ թրջվեցին թարմ ու վառ արյունից: Ցավը սկսեց մեղմանալ: Նա հանեց գրպանից անալգինի հաբը, զգեց բերանը: Հետո մյուս կողքի թեքվելով՝ ջրամանը զոտուց հանեց, բացեց կափարիչն ու ջրով կուլ տվեց դեղահաբը: Դեղն այնքան ցավոտ կուլ գնաց, ասես ուղտախուժ էր: Ինչ արած: Հանումն այս գործի կարելի էր համբերել: Անդրեյը թեթևակի հազաց ու հայացքով ուսումնասիրեց այն տեղը, որտեղ հիմա հայտնվել էր: Լքված խրճիթ էր՝ մոխրագույն հարդաշաղախ քարերից կառուցած, այստեղ նախկինում երկի անասուն են պահել: Փայտե ձողանները, որ ինչ-որ ժամանակ որպես տանիք էին ծառայում, կտորվել ու թափվել էին անձրևներից ու քամուց, և անցքերից երևում էր կապույտ, անհուն երկինքը: Շուրջը խոտի խրճեր էին թափված, ոչխարների ու թարմ խոտի միախառնված հոտը տարածվել էր օդում:

Անդրեյը քիչ առաջ էր արթնացել սուր ցավից: Ինչքան էր ընկած մնացել և ինչպես էր հայտնվել այստեղ՝ նա չէր հասկանում: Քունքերում ասես կտցահարում էին: Նա կրկին խնեց ջրամանից: Հիշողությունը կամաց-կամաց սկսեց վերականգնվել: Այսօր տեղի ունեցած դեպքերի պատահիկները սկսեցին պատվել գլխում: Նա փորձեց բարձրանալ, բայց չկարողանալով հավասարակշռությունը պահել՝ փլվեց հողե հատակին: Գլուխը պտտվում էր, ինչպես մանուկ օրերում, երբ գրագ գալով՝ կարուսելին նստեց ու պտտվեց երեք անգամ: Այսօր առավոտյան հետախուզական վաշտում, ուր Անդրեյը պայմանագրային ծառայությունն էր անցնում, պետք, խարույկի մոտ նստած, մի ածխի կտորով

վառում էր ճմռթված «Բելոմորը».
– Ուրեմն այսպես, Տրոֆիմով, ասաց նա և, ձեռքն այրելով, զգեց ածխի կտորն ու բռնեց ակամեղի բլթակից, այսպես է հաջորդականությունը, ասում են՝ երկուսով Նայրուլլինի հետ առաջ եք շարժվում կածանով, տեսե՛ք՝ ինչն ինչոց է: Երեկոյան մի հովիվ ասում էր, որ արահետում անծանոթների է տեսել:
– Պարոն կապիտան, իսկ այդ խաշնարածին կարելի՞ է հավատալ, Անդրեյը հանեց տուփից մի ծխախոտ, մատների ճարպիկ շարժումով փափկեցրեց և հրամանատարի ներկայությամբ վառեց:
– Ո՞վ է հասկանում կարելի՞ է հավատալ նրանց, թե՞ ոչ: Ամեն դեպքում, տեղեկությունը պետք է ստուգել: Զորաբանակի օպերացիա է նախատեսված, չի՞ կարելի ռիսկի դիմել: Այսպես ուրեմն, ասում են՝ զննե՛ք երկուսով և զննե՛ք: Դուք հմուտ մարտիկներ եք, առաջին տարին չէ: Կմոտենա՞ք լուռ և անաղմուկ: Եթե ինչ-որ մանր-մունր ճողոպրածներ են թափառում, աստանան նրանց հետ, ասում են՝ խոշոր ավազակախմբին մեր թիկունքում վրիպելու իրավունք չունենե՛ք: Հասկանալի է:
– Բացահայտելու դեպքում ինչպե՞ս գործենե՛ք:
– Ըստ իրադրության. եթե ինչ-որ լուրջ բան լինի, միանգամից ծլկե՛ք:
– Ծիշտ այդպես, պարոն կապիտան, կ՛վկե՛ք, - ծիծաղեց Անդրեյը:
– Միայն հակառակորդի խոշոր ուժերի հայտնաբերման դեպքում ծլկել, ասում են...: - նրանց հետևից ծիծաղով պատասխանեց հրամանատարը:
Այրատ Նայրուլլինը լռակյաց տղա էր, կարելի էր ասել՝ խոժոռ: Ալկոհոլ չէր խմում, խոսակցություններին չէր խառնվում: Շուրջը կատարվող ամեն ինչ Այրատն ընկալում էր անվրդով ու մի տեսակ անտարբեր սառնությամբ: Միայն մարտական ընկերների զոհվելուն ոչ մի կերպ չէր կարողանում համակերպվել: Այն բանից հետո, երբ հեթոթական «երկուսուրտերորդին» տեղավորում էին պլաստիկ պարկի մեջ, Այրատը հեռանում էր՝ ատամները կռճատացնելով, առանձնանում: Հետախուզական վաշտ նա վերջերս էր եկել հոսպիտալից, մինչ այդ նա հաշվառված էր Կողոպտյան լեռնանցքի մոտակայքի սահմանապահ վաշտում: Բայց երբ ողջ ժամապահական խմբին վերադարձնելու ավազակները, նա կտրուկ հրաժարվեց վերադառնալուց: Ավելին՝ խնդրեց տեղափոխվել ամենաթեժ կետը: Կրակից՝ հրի մեջ. այսպես էր ասում նրա մասին վաշտի հրամանատարը:
Անդրեյն արահետով գնում էր առջևից, Նայրուլլինը հետևում էր նրան: Օրն արևոտ էր, քամի էլ չկար, շուրջը դայլայլում էին թռչունները, ծաղկող կանաչի բույրերն արթնեցնում էին:
– Այրատ, իսկ դու եղե՞լ ես տափաստաններում, - և Անդրեյը կիսածայն երգեց.
«Ուր պայմաններում վազվզում են բիզոնները,
Իսկ բառաբանների վերևում մայրամուտներ են՝ հանց արյուն...»:
– Այրան մասին պետք չէ, - արձագանքեց Նայրուլլինը:
– Ի՞նչ է՞՞ այսպես լուռ էլ պիտի քայլե՞մք...
– Այո՛, լուռ, այսպես լավ է:
– Ինչպես կասես, - և Անդրեյը նեղացած մրթմրթաց, - Ի՞նչ ես

կարծում, մեր կյանքում պատահականություններ լինո՞ւմ են, թե՞ միայն օրինաչափություններ են...
Բայց Այրատը ոչինչ չաստասխանեց, Անդրեյն արագացրեց քայլերը: Արահետից դուրս գալով՝ մարտիկները սանրում էին անտառը: Անդրեյը չէր տեսնում Այրատին, բայց զգում էր նրա մոտիկ ներկայությունը: Հանկարծ իրենից աջ երեք անգամ կկվի կանչ լսվեց: Դա պայմանաճան էր: Անդրեյը նստեց հողին, նայեց շուրջն ու սողաց դեպի ծայրը: Այրատը պառկած էր բլրակին: Անդրեյը հասավ նրան ու հրեց կողքից, վերջինս գլխով ցույց տվեց ձախ կողմը: Անդրեյը ձգվեց ու նայեց. մի քառասուն մետրի վրա՝ լեռնալանջով շարժվում էր զինյալների շղթան:
Ուսերի վրա տանում էին ծանր ուսապարկեր, մի քանիսը քար էին տալիս ծանր գնդացիները:
Համազգեստները տարբեր երանգների ու տիպի էին, գլխներին կանաչ գլխակապեր էին արաբական հյուսագրով:
Հանկարծ առաջինը կանգնեց ու բարձրացրեց ձեռքը: Ամբողջ շղթան կանգ առավ: Մարդը նայեց շուրջըլորը, հոտոտեց, նայեց թաքնված մարտիկների ուղղությամբ: Անդրեյը փութով քաքքեց գլուխը, պառկեց մի քանի րոպե ու կրկին դուրս նայեց: Շղթան կրկին շարունակում էր ընթացքը:
– Քանի՞սն են, - շշմջաց Անդրեյը:
– Մի հարյուր հիսուն, - կամաց պատասխանեց Նայրուլլինը:
Հովիվը չէր խաբում:
– Ի՞նչ, - հարցրեց Այրատը:
- Երեկ երեկոյան սրանց հետախուզական խումբն այս կողմերում պրպտում էր, անցումներն էին նախանշում: Վերջ, ծլկում ենք, - և Անդրեյը նորից հրեց թաթարին:
Մինչև հիմա չէր կարողանում Անդրեյը հասկանալ, թե ինչպես փորձառու և շատ բան տեսած մարտիկներ լինելով՝ ականջ չէին նկատել: Նռնակը լավ քողարկված էր, իսկ լարը հողի վրայով էր ձգած, խիտ կանաչի մեջ ուղղաձիգ չէին նկատել: Պայթյունն այնքան անսպասելի էր, որ Նայրուլլինը միանգամից փռվեց հողին: Իսկ Անդրեյի ուրբն ասես ծիաբոռ խայթեց: Նա էլ ընկավ, բայց գլուխը թափահարելով՝ արագ սթափվեց: Ափերով մի քանի անգամ հարվածեց ականջներին, իսկ երբ մի քանի վայրկյան անց լսողությունը վերականգնվեց, Այրատին առավ ուսերին և հողի վրա կռահալով՝ վազեց անտառով:
– Է՛յ, եղտե՛ղ՝ վերևում, ո՞ղջ եք, - թափահարեց ընկերոջը. Անդրեյի պարանոցն ի վար հոսեց տաք ու կաշուն արյունը...
Զգուշորեն իջեցրեց խոտերին: Նայրուլլինը դեմքի լուրջ արտահայտությամբ նայում էր կապույտ երկնքին՝ լայն բացված աչքերով: Բեկորն անցել էր պարանոցի միջով, խոր վերք էր բացվել:
Աջ ու ձախ կողմերից՝ իր թիկունքում մի քանի մետր հեռավորության վրա Անդրեյը լսեց անծանոթ ձայներ. հետապնդում էին կրկնակոխ:
– Ներիր, պիպերիկ, - Անդրեյը Այրատին դրեց փոսի մեջ և արագորեն ծածկեց ճյուղերով: Շրջվեց ու ինքնաձիգից մի քանի անգամ կրակ բացեց ձայների ուղղությամբ:
Երկար տևեց փոխարձագությունը, ասես մի ողջ հավերժություն, նրան այդպես թվաց: Իր ուղղությամբ կրակում էին: Ո՞ր կողմից էր՝ չհասկացավ: Երկի բոլոր

կողմերից: Երբ փանփուշտները վերջացան, ատամներով քաշեց ձգանն ու նետեց նռնակը, ասպ երկրորդը, երրորդը... Հետո հանեց դանակն ու ողջ ուժով սկսեց վազել:

Շատ վաղուց, երբ Անդրեյն ավարտել էր ինստիտուտի երկրորդ կուրսը, իր ընկեր-համակուրսեցիների հետ խմբով աշխատում էր շինքրիզագործ: Ամառային արձակուրդներին հնարավորություն էր ստեղծվել գումար վաստակելու: Տղաները գոմ էին կառուցում կոլտնտեսությունում: Իրենց տեղավորել էին միհարկանի հին հյուրանոցում, որտեղ կոլտնտեսության քարտուղարը բնակեցնում էր ողջ սեզոնային աշխատուժը: Աշխատում էին առավոտից մինչև ուշ գիշեր: Այդ հյուրանոց համարվող շինությունում լուրջարան չկար, ուստի ուսանողները աշխատանքից հետո լողանում էին կեղտոտ, ճահճացած լճակում:
Անդրեյը հանվեց ափին, մի կողմ դրեց հագուստն ու մտավ ջուրը: Օձառվելուց հետո սկսեց ջանասիրաբար տրորել մաշկը: Մարմինը, որ սովոր չէր երկարատև ֆիզիկական աշխատանքի, հաճելիորեն ըկվում էր:
– Ընկեր, օձառ ունե՞ս:
Անդրեյը շրջվեց. լճափին մի տղա էր կանգնած՝ շապիկով, փոխանով ու բորբիկ ոտքերին հագած սանդալներով:
– Բռնի՛ր, - և Անդրեյը նետեց տնտեսական օձառի կարծուն կտորը:
Պատանին ճարպկորեն բռնեց օձառը, արագ հանվեց ու դանդաղ մտավ ջուրը:
– Շնորհակալություն, - Անդրեյին էին նայում զույգ սևորակ, խնդուն աչքերը, - ինձ Ռոմկա են ասում, իսկ թե՞ օ:
– Անդրեյ:
Ռոմկան կատարյալ կազմվածք ուներ: Բարձրահասակ էր, թիկները, մազերը ազոսափ թևի զույգ ունեին, հստակ գծագրած դեմք, արծվային դիմազօծեր, և միայն հոնքերի արանքում դարչնագույն կետի պես մի խալ էր նշմարվում:
– Օսե՞ք ես:
– Չե՛չեն, - և Ռոմկան սկսեց օձառել ինքն իրեն, - ավագ եղբորս հետ այգիներում խնձոր ենք հավաքում:
– Լա՞վ են վարձատրում:
– Մենք մթերքով ենք վերցնում, - ծիծաղեց Ռոմկան, - հինգ արկղ հավաքում ենք, վեցերորդը մերն է:
– Իսկ մենք այստեղ գոմ ենք կառուցում կաթի ֆերմայի հետևում, տեսե՞՛լ ես:
Այս ծանոթությունից հետո Ռոմկան ուսանողների հաճախակի ու սպասված հյուրը դարձավ: Տղաների հետ նա էլ խաղում էր նարդի ու ֆուտբոլ, գնդակով հարվածոց դիպուկ էր ու ճիշտ:
– «Թերեկի» (Գրոզնիի պրոֆեսիոնալ ֆուտբոլի ակումբը) կազմում էի խաղում մի ժամանակ, - հպարտ ասում էր նա:
Ռոմկան միայն ավագ եղբորից էր վախճանում ու հնազանդվում էր նրան առանց կարածառելու:
Երաժշտությունը բարձր էր: Կոլտնտեսության վարչության մոտակա մարզագետին պարում էին տեղացի տղաներն ու աղջիկները: Ամենուր ուրախությունն էր թևածում: Ազատ օր էր. կարելի էր լիցքաթափվել, պարել:
Ուսանողներն առանձին խմբով էին հավաքվել: Ռոմկան նստած էր Անդրեյի կողքին:

– Է՛յ, դու, հի՛ը արի եստեղ, - Ռոմկային մատով կանչեց ու չարացած նայեց մի պատանի՝ կանաչ լայն տաբատով:
Այս տղային Անդրեյը նախկինում չէր տեսել:
– Գործ չունե՞ք դրա հետ, - Անդրեյի ակամեղ շշմջաց տեղացի աղջիկներից մեկը, - դա Գեճկա Կրիվովն է, նոր է բանտից դուրս եկել: Վա՛յ, Ի՞նչ է հիմա լինելու...
Ռոմկան ժպտալով ելավ տեղից: Նա համարձակորեն նայում էր այդ տղայի աչքերին: Անդրեյն էլ փորձեց վեր կենալ, բայց տղան հրեց, ու նա ընկավ նստարանին:
– Քեզ հետ հետո կխոսեմ, իսկ հիմա տեսնե՛մ ինչ գույնի է այս գայլի ձագուկի արյունը, - քծծիծաղեց նա:
Անդրեյը կտրուկ վեր ցատկեց ու կանգնեց ընկերոջ կողքին հավելով նրա ուսին: Ռոմկան նայեց նրան, ամեն ինչ հասկացած ժպտալ, հետո խոժոռված հայացքը զգեց Գեճկայի վրա:
– Իսկ մենք միասին ենք, - և Անդրեյն իր համառ հայացքը սևեռեց կլոր, չարախիճ աչքերին:

Անդրեյը կոկորդային ձայն լսեց: Ավազակները սանրում էին անտառը: «Այստեղ հաստատ կմտնեն, - անցավ մտքով, - չեն կարող չմտնել: Դե ինչ, եթե մեռնել, ապա երաժշտության ներքո»:
Անդրեյը շոշափեց հատակն ու սառեց: Դանակը չկար: Նա փնտրեց ծանրոցում, ապա գրպաններում, չկար...
Հանկարծ զգաց, որ մեկն իրեն է նայում, և բարձրացրեց աչքերը: Դռան մոտ կանգնած էր մի հաղթանակալ մարդ՝ ձեռքին ինքնաձիգ: Նա ուշադիր զննում էր Անդրեյին: Մի ձեռքով արդեն պատյանից հանել էր ոսկրե բռնակով դաշույնը՝ կախելով ինքնաձիգն ուսին: Ծեկ մորուքը ցցվել էր, արաբներն զրույթունը երկու խաչված սրերով ճեղքակին էր տալիս մթան մեջ: Անդրեյի մարմնով սարսուռ անցավ, հասկացավ, որ հիմա կոկորդը կկտրվե:
Ավազակը մոտեցավ, կռացավ վրան, հետո բռնեց ծնոտն ու գլուխը բարձրացրեց: Անդրեյը կոպերը բացեց: Նրան էին նայում սևորակ աչքերը: Հոնքերի մեջտեղում խոշոր, դարչնագույն խալն էր: Մի քանի վայրկյան ուշադիր զննում էին միմյաց:
– *Է՛յ, և Վահիտ, հասկի վո՛ւ, - հարցրին դրսից, լսվեցին մոտեցող ոտնածայներ:
Ավազակը բաց թողեց ծնոտը, փութուտ ելավ տեղից, Անդրեյի գլուխը խոնարիվեց կրծքին: Նա պատրաստվեց մեռնելուն: Ցավն ընկրկեց:
– **Է՛յ, ա, դոթթագա՞, - նորից գոչեցին դրսից:
– ***Վա՛ց, - չե՛չենը շրջվեց՝ պատրաստվելով դուրս գալ խրճիթից:
– Շնորհակալ էմ, Ռոմկա, - շշմջաց Անդրեյը, բայց տղամարդը միայն ուրբ թռվեց ու անհետացավ դռան բացվածքում:
Ծանոթագրություններ
*Է՛յ, Վահիտ, ռուսներ կա՞ն (այստեղ և հաջորդիվ՝ չե՛չեներեն)
** Է՛յ, ընկեր...
*** Ո՛չ:
Թարգմանությունը ռուսերենից՝ Մարինա ԳԵՎՈՐԳՅԱՆԻ



Ի ՎԵՐԱ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒԲ Ե ԳԱԳԻԿ ՍԱՐՈՅԱԼՆԸ

«...Արիստոտելը ինչ էր ասում ՊՈՆՏԻԿԱՆ-ում. «Մետաֆորը գործիք է, որը հնարավորություն է տալիս զուգահեռել իրերի առանձին մտածողությունները լեզվական հանրահամայնության մեջ, դրանց միջնորդությամբ կարողանալ ստեղծել առավել ընդգրկուն պատկերներ»: Ասել է թե՛ բանաստեղծությունը նախ և առաջ մետաֆոր է, փոխաբերություն: Մոտավորապես երկու-երեք հազար տարի առաջ էր ասվել, որ բանաստեղծությունը մետաֆոր է, մի այլ աշխարհի փոխաբերական պատկերումը, որից հազար տարիներ հետո նոր մարդիկ գլխի ընկան, որ բանաստեղծությունը կողմնակի աշխարհն է, կողքի աշխարհը, զգացողությունը: Դրա համար մետաֆորը արդարացված է: Այն պոետը, որ կհասկանա, որ մետաֆորը հենց կողմնակի աշխարհի պատկերումն է, ուրեմն ինքը ճիշտ ուղու վրա է: Այլապես, մետաֆորն օգտագործել հենց ենպես, հիմարություն է:

-Չեմք էր մասին էի ուզում հարցնել, գիտե՞ս: Գիտե՞ս ինքս կարող է հակասել ինձ, կարծե՞մ ասացիր, որ մետաֆորը պիտի սահմանափակել, գուցե ինչ-որ բան լավ չեմ հիշում...

-Զե, մետաֆորի մասին չէ, մակդիրի, ածականների մասին կարող եմ ասած լինել, քանի որ ասելիքն ավելի կարևոր է, քան գունագեղությունը...

-Այսինքն՝ ինչ-ը, և ոչ թե ինչպես-ը... Եթե պիտի ընտրես...

-Նախ ինչ-ը, հետո՝ ինչպես-ը... Մեկը մյուսին չհամագործակցող բաներ են: Ինչպես ասեմ. եթե ասելիք ունես, կարող ես դա ասել առանց մակդիրների, առանց ածականների, բայց եթե այնքան հուզում է քեզ թո ասելիքը, դու ուզում ես իրեն գործարարել: Ինչպես որ քո երեխային կզարդարես՝ մազին մի գույնգույն թելիկ կապելով...

- Իսկ պարոն Սարոյան, ի՞նչն է խնդիրը, որ դու քո մակդիրներն ու մետաֆորները գոյականացնում ես: Ավելի հստակ, ածականներ ես կերտում գոյականներից՝ թռչնե, տատարակե և այլն... Թեզ ածականները չե՞ն հերիքում...

-Չեմաքրքիր բան ես հարցնում...

- Այո՛, քո պոետիկայից ելնելով՝ դու գոյականներն անընդհատ ածականացնում ես...

- Նախ, դա լեզվի հնարավորությունն է... Եթե մեր լեզուն տալիս է եղ հնարավորությունը, որ

գոյականը ածականացնենք, ու քո ներքին ապրումը ևս քեզ տալիս է այդ հնարավորությունը...

- Չես ասում թռչունի արծանը, ասում ես՝ թռչնե արծան... Տատարակե՛ ասել է թե՛ մի անուշ բան, քեզ անուշ, քաղցր բառը չի՞ հերիքում... Թո լեզվամտածողությունն է՞ էդպիսին, թե՞ գեղարվեստի մեջ մտնելով ես դա անում...

- Եթե գոյականը մի է՜ տառով ածականանում է ու քեզ հնարավորություն է տալիս տարբեր տարածություններ բացելու, ինչո՞ւ չասել. մեկ բան է թռչունի արծանը, այլ բան է թռչնե արծանը... Ապրումը քեզ այլ տարածք է տանում... Ընդամենը այդ ենթադրյալ է՜-ը... Իմ մեջ էդպես է գրնգում... Չիե՞ արծաններ էլ կան... Ոչ թե ձիու, այլ ձիե՛...

- Ես քո պոետիկայից լիքը կապակցություններ եմ հանել, որոնցում դու է՜-երով ածականացրել ես գոյականները. գեղարվեստ, նաև՝ բառաշինություն: Դասդասում եմ բոլոր գործածած հնարքներն ու գեղարվեստական կառույցները:

-Ո՞ր մեղքիս համար...

-Մեղքերիդ համար չէ. քո ընթերցողին քեզ մոտեցնելու համար եմ անում: Մի բան էլ պիտի հարցնեմ... Օրինակ, Սարոյան, եթե քեզ ասեին, թե, խոսքս հիմայի գրականության մասին է, եթե հարցեր տրվեին, դու որևէ մեկին տեսնո՞ւմ ես, ով ինչ-որ բան փոխել է քո բանաստեղծական աշխարհում, կյանքում: Ավուր-ներդ գիտե՞մ Գողթան երգեր, միջնադար, Թլկուրանցի, Քուչակ... Իսկ հիմա...

-Ինչպես բացատրեմ... Այսինքն՝ որոնում ես ակունքները իմ բանաստեղծության, որ շատ հեռու են, քան միջնադարը...

-Շատ հեռու-ի մասին քո բալլադներն ասում եմ...

-Բալլադները պատվերով գրված չեն, դրանք իմ ներքին պատվերով են գրվել: Որոշել եմ խաղ անել, որ չասեմ, թե այդ ժամըր մեռած է, կամ երկար բանաստեղծությունը մեռած է: Ես կարող եմ մի տողով, երկու բառով բանաստեղծություն գրել, և կարող եմ հազար բառով էլ գրել...

-Կներես, որ ընդհատում եմ, դու բալլադների ու բանաստեղծության տարբերությունը տեսնում ես երկարությամբ մեջ...

-Զե, մի րոպե... Կարճի ու երկարության խնդիրը չէ...

-Որ ասում ես՝ չասե՛մ՝ երկար բանաստեղծությունը մեռած է. դրա համար հարց տվեցի...

-Զե, խոսքը ժամրի մասին է: Նաև... Մի վարկած կա, որ ասում են ժամանակակից մարդիկ կարիք չունեն երկար բանաստեղծության: Ոնց որ ասեմ թե՛ ժամանակակից մարդիկ կարիք չունեն սիմֆոնիայի... Մարդիկ ընդամենը էտյուդի կարիք ունեն, 4-5 րոպեանոց... Բայց կարող է՛ երկու-ժամանոց սիմֆոնիան շատ ավելի կարևոր է, քան էտյուդը... Ով է ասում, որ մեկը մեռած է, մյուսը՝ չէ: Ես երկուսին էլ տիրապետում եմ, շատ լավ: Շարքեր ունեմ, որոնցում մեկ-երկու բառանոց տողեր կան:

-Այո՛... //Ո՞ւր է քո երկինքը...//, //Ո՞ւր է քո տաճարը...//

Սարոյան, վերնագրերի հարցում դու ազատ չես հաստատապես: Թո վերնագրերը շատ հետաքրքիր են: Ի՞նչ ես կարծում բանաստեղծությունն առանց վերնագրի շա՞տ է պակասում: Բանաստեղծությանը որքանո՞վ է պետք վերնագիրը: Վերնագիրը ի՞նչ է ավելացնում բանաստեղծությանը: Դու վերնագրերը ինչպե՞ս ես դնում, ինչպե՞ս ես գտնում...

-Վերնագրերի հարցը հետաքրքիր էր... Ես հաջողությամբ կարող եմ թվային տարբերակով վերնագրել: Ինչպես ասեմք իմ շարքերի դեպքում է...

-Վերնագիրը քեզ համար բանաստեղծության փաթեթավորում է...

-Օրինակ, Սևակն ասում է՝ մի՞նչն ես բանաստեղծության վերնագիրը չգտնեմ, բանաստեղծությունը չեմ կարողանում սկսել գրել: Բայց ես խնդիր չունեմ... Այլաշխարհիկ ապրում է: Գրում ես՝ նախնական որևէ վերնագիր չունենալով: Չետո, երբ որ ասելիքը վերջանում է, լիանում ես, տեսնում ես՝ թե ինչ ես գրել, փորձում ես անուն դնել...

-Այսինքն՝ դու վերնագիրը դնում ես գրելուց հետո...

-Չիմանականում՝ այո... Երեխայի պես բան է. մարդիկ մի՞նչ են երեխա ունենալը որոշում են, որ իրենց երեխայի անուն դա՞ պիտի դնեն, չէ՞... Մարդիկ էլ կան, երեխան ունենում, հետո նոր անուն են փնտրում...

-Իսկ կարելի՞ է մտածել, որ մատուցելիս որոշակի փաթեթավորում եմ...

-Դե՛ բանաստեղծության վերնագիրը թեթևակի բանալու պես բան պիտի լինի: Կողմնորոշիչ ընթերցողին... Բայց ես ավելի շատ կնոտեման հարցին, որ երեխայիդ ունեցել ես, դու քո պապի անունն ես տալիս իրեն: Կամ էլ, ենթադրեմք, աչքերին ես նայում, տեսնում ես, որ ինքը պապիդ անունը չպիտի կրի: Բնավ կապ չունի: Ուղղակի պիտի նայես՝ ինչ է ստացվել... Կամ չի ստացվել...

-Պըլտյանը շատ հետաքրքիր բաներ է ասում... Նաև Օշականը... Չեմաքրքիր տարածքներ եմ բացում: Թո բանաստեղծության տարածքը սահմանագիծ ունի: Ասե՛նք հասնում ես մի տեղ, որից հետո հետ ես դառնում: Եսպիսի սխեմա է տալիս Պըլտյանը, յոթանդամ մտածում-ապրում-կյանք-մահ-կյանք-ապրում-մտածում... Ասել է թե՛ մտածումից մտածումի արանքը... Գնում ես հասնում է՛նտեղ, որտեղ մահը կենտրոնն է, ապա վերադառնում նորից կյանք-ապրում-մտածում...

-Դա քմահաճ բան է: Ես ապրում եմ: Բանաստեղծությունը թե ուր կտանի՝ ես չգիտեմ: Դա գրաքննադատների, գրականագետների որոշածն է: Բանաստեղծը գրում է, հետո գալիս որոշում են, թե էսպես է գրել, էնպես է գրել... Խնդիրն այն է, որ եթե հաջողված բանաստեղծություն է, ուրեմն ինքը կտանի՝ ըստ հեղինակի այլասերվածության կամ ըստ դաստիարակության, ըստ

նվիրումի, ըստ բանաստեղծի և ընթերցողի մտահորիզոնի, ըստ ընթերցողի կարողացածության աստիճանի, ըստ նրա արյան շնկշնկոցի... Բնավ կապ չունի: Չես կարող որոշել: Բանաստեղծը ինչպե՞ս կարող է որոշել, թե՛ էնպիսի բան գրեմ, որ տեղավորվի 6, 7 և այլն նշանների տակ...

-Սրանք նշաններ չեն: Ինքն ասում է՝ բանաստեղծության ելակետը մտածումն է...

-Դե՛ ես պայմանական եմ ասում... Ես քանի որ պրոֆեսիոնալ բանաստեղծ չեմ, չեմ մտածում ինչ գրեմ: Ես գրիչը վերցնում ու գրում եմ...

-Իսկ երբևէ մտածել ես, որ քո ընթերցողը կարող է քեզանից առաջ է ընկնում քո գործը կարդալիս...

-Փառք Աստծո՛ւ... Ուզում է՝ թող առաջ ընկնի, ուզում է՝ ոչ...

-Դու հանգիստ թույլ կտա՞ս, որ քո ընթերցողը քեզանից առաջ ընկնի: Պա՞րզ է՞ ինչ եմ հարցնում. դու ընթերցողին քեզ հետ տանում ես, տանում ես... Էդպիսին է քո գրականությունը. ես կարդում եմ, քո բոլոր պատկերների հետ գալիս, գալիս հասնում եմ քեզ... Չետո լինի մի պահ, որ դու կանգ ես առնում, ես շարունակում եմ գնալ... Էդպիսի բան մտածո՞ւմ ես...

-Ուրեմն, կեցցե՛ եղ բանաստեղծությունը, որ հնարավորություն է տալիս կարգաջողի շատ ավելի առաջ գնալու, քան բանաստեղծը, գրողը մտածել է գրել:

-Դու դա հնարավոր ես համարում: Լինո՞ւմ է էդպես, որ ընթերցողը բանաստեղծից առաջ անցնի:

-Իհարկե: Ասե՛նք՝ Մինասը պատկեր է նկարել, չէ՞: Ոչ մի ասելիք չկա: Գունային ապրում է: Ըստ խելացնորության չափի՝ յուրաքանչյուր դիտող ինչ-որ տեղ է հասնում էղ գունային ազդեցության տակ: Բանաստեղծությունն էլ է էդպես: Պատկերը, ինչպես որ կտավի վրա կա կամ երաժշտության մեջ, ասե՛նք, որպես համարություն. ենթադրե՛մք՝ թավջութակ ու թմբուկը. մեկը սկզբից է խփում, մյուսը ճովողում է, չէ՞, նայած ուր է տանում՝ ըստ լսողի ներաշխարհի... Դա լավ է, որ տարբեր տեղեր է տանում: Դեմ չեմ: Կամ ինչո՞ւ պիտի չտանի: Եթե մարդը երագող է, եթե մարդը շատ ավելի խելացի է, քան բանաստեղծը, ուղղակի չի կարողանում բառավորել իր զգացածը, լավ չէ՞, որ անցնում է... Ասե՛նք՝ գլխի է ընկել, որ բանաստեղծը իր ուղղությամբ է գնում, դրանից հետո ինքը գլխի է ընկնում, թե ուր գնա... Դա հենց ենթատեքստն է, որը իրում է, ձգում է, որովհետև բանաստեղծությունն ինքն իր համար արժեք է արդեն: Բանաստեղծից անկախ: Դա մարգագետնով սլացող, վարգող ձի է, որը դիտողի հայացքը իր հետևից քարշ տալով տանում է...

-Սարոյան, քո վաղ գործերում դու այդքան շատ չես բնութային հետ: Չետո աստիճանաբար եկար, եկար ու հիմա լրիվ բնութային հետ ես, այդպե՞ս է...

-Զե, չէ՛, իմ առաջին գործերս, հե՛նց առաջին, լրիվ մաքուր բնություն են:

-Սարոյանի մասին խոսելիս շարքերով կամ առաջին ու վերջինով սխալ է խոսելը... Պիտի, այսպես ասած, քարտեզագրում անել՝ որտեղից ուր ես հասել: Այլապես անհեթեթություն է դառնում. բոլոր տեղերը լցված են...

-Պարոն Սարոյան, մի բան էլ հարցնեմ... Երբ գրում ես, լինո՞ւմ է, որ մտածես ընթերցողիդ մասին:

-Ես ոչնչի մասին չեմ մտածում: Բացարձակ: Անգամ գրելուց հետո չեմ մտածում: Ի՞նչ մտածես: Խնդիրը մեր հոգիներ-



Զրուցում է Գեղեցիկ Մարգարյանը

րի, ինչպես ասեմ, փրկության, նրբալիկ աստվածակարգի մասին պիտի լինի: Եթե վերիս-քը կա, թափվում է, ու էդ բանը գրվում է, ուրեմն՝ վերջ... Ես էլ ի՞նչ մտածեմ: Ով որ ինձ թելադրել է, արդեն մտածել է, չէ՞, որ ինձ թելադրում է: Ենթադրե՛մք՝ ծիծեռնակը թռչում է, ու իր ճախրող պատկերը, կամ ջրածաղիկը աճել է, չէ՞... Ինքն արդեն մտածել է, որ աճել է: Դա աստվածակարգով նշանավորված, կանոնավորված է: Բանաստեղծությունն էլ: Ուղղակի բանաստեղծությունը այդ ծաղիկի, այդ թռչնի շարունակությունն է, մեր հիացմունքը: Ուրիշ բան չկա: Բանաստեղծությունն ուրիշ գաղտնիք չունի... Օձաղիկ է, դաշտում, սարի լանջին, գառիթափի վրա աճել է: Նայում ես, հիանում ես, չէ՞: Եթե դու փորձես իրեն վերատեղավորել քո տարածքում, բառերի մեջ, դու արտագրում ես ծաղիկին, վերա-արտասանում ես իրեն: Ասես թե Աստծուն վերա-արտասանես, որովհետև ծաղիկն արդեն վերաարտասանել է իր Աստծուն, իր բուրմունքով, իր գույնով... Նույնն էլ բանաստեղծն է. իր շուրջը գտնվող աշխարհը ինքը վերաարտասանում է: Դա այն ճանապարհն է, որի միջով դու ուզում ես հասնել Աստծուն: Ուրիշ ճանապարհ չկա: Որովհետև մարդիկ ըստ էության մոռացել են ինչի համար արարվեցին: Օրինակ, տեսե՛լ ես ծաղիկ, որ ծաղկապան լինի կամ մարդասպան: Ինքն իր տեղում աճում է: Աստված իրեն ստեղծել է աճելու, էղ քանի օրը, որ տրվել է իրեն... Իսկ մարդիկ մոռացել են դա. ծաղիկը ծաղկին չի սպանում: Այլ է կենդանական աշխարհում. մարդու պարագայում մեկը մյուսին ուտելու խնդիր չկա: Գուցե թե ծաղիկներ է՛լ կան, որ մեկը մյուսին ուտում են, բայց դա ինքնապաշտպանական բան է. կարող ես պաշտպանվիր... Բանաստեղծն էլ է պաշտպանվում:

-Սարոյան, քո վաղ գործերում դու այդքան շատ չես բնութային հետ: Չետո աստիճանաբար եկար, եկար ու հիմա լրիվ բնութային հետ ես, այդպե՞ս է...

-Զե, չէ՛, իմ առաջին գործերս, հե՛նց առաջին, լրիվ մաքուր բնություն են:

-Սարոյանի մասին խոսելիս շարքերով կամ առաջին ու վերջինով սխալ է խոսելը... Պիտի, այսպես ասած, քարտեզագրում անել՝ որտեղից ուր ես հասել: Այլապես անհեթեթություն է դառնում. բոլոր տեղերը լցված են...

-Պարոն Սարոյան, մի բան էլ հարցնեմ... Երբ գրում ես, լինո՞ւմ է, որ մտածես ընթերցողիդ մասին:

-Իմաստ էլ չունի. նույնն է, թե հիմա նստես որոշես, թե Քուչակը կամ Պլուզը կամ Թլկուրանցին որտեղից են սկսել...

-Այո: Քո ՏՄՐԱԾԱԿԱՆ ԾԱՂԻ-ԿԸ, որ առաջիններից է, խտան-յուք է կարծես թե: Ամեն մի բա-նաստեղծություն կարելի է «բա-ցել», ու ամեն մեկի մեջ լիքը բանաստեղծություններ կան՝ ի տարբերություն շարքերի: Անգամ բառը, ոչ թե տողը, շա՛տ խիտ է... Ուրիշ մի բան էլ եմ ուզում հարց-նել. իրերի պոեզիա, Ռիլկե...

-Իրը ի՞նչ է, ըստ էության... Պատկեր է, պատկերների պոեզիա:

-Պատկեր, պատկեր, պատ-կեր, ու էլ պատկերների համա-խումբը՝ մի հատ ծավալում այլ

պատկեր... Քո տիեզերքի էկրանը, որ ասում ես՝ տիեզերքի էկրանի վրա... Դու էլ մեծը ի սկզբանե տեսնո՞ւմ ես, թե՞ երբ որ գրում ես, հետո է տեսանվում:

-Ասեմ, գրիչը զարմանալի էություն ունի: Գրիչը վերցնում ես, ու չգիտես՝ ինչ պիտի գրվի... Կան պատկերներ, որ անկախ քեզնից, գրելով գալիս են: Բայց դա չէ կարևորը: Կարևորն էն է, որ դու գրիչը վերցնում ես, ինքը ուր է տանում քեզ: Օրինակ, ես մի պատկեր ունեմ գրած՝ //Ընդա-մենը լույս ես՝ պողպատե ճոպան-ներով խատուտիկի պարանոցից

կառչած//... Աստծո խատուտիկն է ինքը, մեջը դատարկ խողովակ, քնքուշ խատուտիկը...

Դա նախօրոք ինչպե՞ս կա-րող ես մտածել: Ես կյանքում չեմ որոշել որևէ անգամ, որևէ բանով զարմացնել, անգամ երբ 16-18 տարեկան եմ եղել, երբ մեր սե-րունդը, բոլորը փորձում էին... Ինչ-որ բանով զարմացնելու պատկեր չեմ սարքել: Թերևս մի անգամ մի բանաստեղծություն գրել եմ զարմացնելու համար / ծիծաղում է.../:

-Ասել կուզես՝ միտքդ չի մաս-նակցում, կամ էլ միայն տալիս է

առաջադրանքը քեզ, մնացյալը իր գործը չէ...

-Դա կախարդական պահ է: Գրիչը վերցնում ես, թուղթը ու դու... Գրում ես ու չգիտես, թե էլ պողպատե ճոպանը որտեղից եկավ ու ճոպանեց էլ խեղճ խա-տուտիկի պարանոցը: Ես դրա պատասխանը չունեմ: Նախօրոք չեմ մտածել: Գրելուց հետո էլ, ավելին, զարմացել եմ, թե ինչպես գրվեց. իմ արև, չգիտեմ... Բացառ-ված է, որ ես դրա պատասխանը իմանամ...

-Իսկ լինում է՞, որ Գագիկ Սա-

րոյանին տողը սահմանափակի, բանաստեղծական տողը, չափը, հանգը քեզ փորձեն խեղճացնել...

-Չէ, բացառված է: Ես որևէ խնդիր չունեմ բանաստեղծու-թյան հետ, ոչ չափի, ոչ ռիթմի, ոչ ասելիքի: Այլ հարց է, որ երբեմն կանոնիկ բանաստեղծություններ եմ գրել՝ ապացուցելու համար, որ ես տիրապետում եմ դրան, և ասեմ՝ շատ լավ եմ տիրապետում: Լիքը կանոնիկ գործեր ունեմ, չքնադ, ինձ համար, բայց նրան-ցում էլ եմ ես բացարձակ գաատ: Էդ կանոնները ինձ չեն խանգա-րում, որ անկանոն լինեմ...



ԴՎՎԻԹ ԳԱՐՈՅԱՆ

Հեռվում՝ հորիզոնի թանաքը Լեռների ուրվագիծն է շոյում ... Տունս այնտեղ է՝ Լռության կողքին: Սրտիս տրոփյունը ժառանգել եմ նրանցից: Ինչ-որ ժամանակ Նրանք էլ են բաբախել, Հետո կանգ առել, Հարատև մնացել Հորիզոնին մոտիկ...

17.04.24թ. Երևան

Հենց կշտանամ օդից Կժպտան առաստաղին... Վերջին աղոթքից առաջ Անկարողությունից հոգնած ձեռքերս

Կբարձրանամ վերև, Սայթաքող ցողի նման Կկախվեմ անթել: Կխմորվեմ, հետո կհունցվեմ իրար Ձուլվելու աստիճան: Խաչակնիք օդում Մյուռնը ցող կդառնա, Կոռոզի աղոթքներիս հայրենիքը... Խնկածաղիկների մի փունջ կհավաքեմ Անհաշտ հոգուս լեռներից Ու կանձանամ պատարագող արևածագին ընդառաջ...

15.12.23թ. Երևան

Կանգնել էի ամպի նման Հին քամիներ գլխավերևում Ատամներիս տակ սեղմվելով, Ծամելով անցյալի փոշին դառնահամ: Փշրված երազանքներիս յուրացված մնացորդներով Հավաքական սիրտ էի կառուցել տաճարի նման: Կողպուտի ելած հայացքս՝ Մռայլ բեկորի նման թռավ վերև՝ Իր շահած վայրկյանը վայելելու, Ու փառապսակ մի աստղ տեսավ...

լույս՝ 11.11.21թ. Երևան

Որբատան փողոցներում Մայթերի մեջ Խրատները սպանած, Հայիոյախառը ժպիտները դեմքերին Անժայր որբուկները Ինքնամոռաց նետվում են ժամանակավրեպ պատրանքի գիրկը...

լույս՝ 25.07. 21թ. Երևան

Քանդված բախտանոցի գլխավերևում՝ Որտեղ ոչինչ ճանաչելի չէ, Ձանգի գոտկատեղից Ուլունքագիծ հառաչանքները Շոյում են ներսիս տոհմական նշանները: Ոտքերիս տակ պառկած դուռ, Դժբախտություն՝ հենված պատմության վրա: Շողերից ծակծկված միտքս Վկաներ է փնտրում Ցավերի գետի առաջ... Ներսիս վեհությունը Փառավոր կերպով արժաթացավ.....

լույս՝ 06.12.23թ. Երևան

Ինձ նմանները երբեք չեն թռչում, Ընկնում են միայն Եվ սկսում նորից մազլցել՝ ժամ ժամի հետևից Զգովելով դեպի վերև: Այդ մաքառման ճանապարհին Միակ ուղեկիցն անցյալն է՝ ճակատագրի պարանոցից կախված, ժամանակից հյուսված վզկապի նման:

Անցյալը կատարյալ է, Այնտեղ ոչինչ չի կորչում, Եվ ոչինչ չի ավելանում: Նա մեզ չի հետապնդում Եվ անգամ չի էլ ճանաչում: Ուրվականները եթե գոյություն ունեն, Ապա հենց նրանք են, Ովքեր հետապնդում են անցյալը... Ես չեմ բաժանվում նրանից, Որ տեսնեմ նորից, Տեսնեմ նրան, ում կարոտում եմ: Միայն այդպես եմ կարողանում Լիարժեք տեսնել նրանք թե՛ մութ, Եվ թե՛ լուսավոր կողմերը, Պատճառաբանված հմայքը, Ինչպես քաղաքն է փայլում արևածագին: Քաղաքին փարվող արևի պես Գրկում եմ նրանց Ու հորինում իմ պատմությունը՝ Ողբերգություն, բայց միայն, Եթե սկսել վերջից...

լույս՝ 03.11.21թ. Երևան

Ներաշխարհին ու միտքը Արարչագործության լեռան գլխին Միախառնվելով դարձան հոգի, Մարմին ստացան Աներևակայելի նախախնամությամբ Վերագտան հավերժություն կոչվող Իմաստնության հայրենիքը: Իսկ տապալված կուռքերի Հուզական արձագանքը Հուսահատության վիհերից անդին Հոխորտում էր՝ անեծքը շուրթերին...

28.06.21թ. Երևան

Որոշեցի հոգուս մեռելներին թաղել... Միրո գոհաբերության կտավի վրա Ուրվագծեր գտած պատրանքներս, Մեկը մյուսի հետևից Շրջան կազմած, Կուսակված գոյությունը ամբողջացած, Մահվան պարի բռնվեցին՝

Գմբեթագուրկ շրջանակի մեջ Աղոթք դարձած ճառագայթումիս շուրջը... 26.06.21թ. Երևան

Որդուս խռով հոգին Փորձությունների կապանքների քենից Հապաղում է կորստի դիմաց... Այրվելով խելագար խիզախությամբ Խավարի կույր տեսիլքների Շոշափելիքը դարձած: Լուռ խեղճանում է Այն թաքուն վախով, Որ համընկնումների հորձանուտը Հավերժ կմնա անհաղորդ... Անթաթ հայացքի մեջ, Զնկատելով իր իսկ տարիքը, Արհամարհում է խաչերից իջած Մոխրագույն ամբոխների թագավորին Ու սրտի դրոշագող զարկերից ծնված Սրբատառ աղոթքի խարիսխը Նետում հեռավոր երկինք՝ Աղամի օրերից այն կողմ՝ վերև, Որտեղ թերահավատ խոստովանությունը Միակողմանի հմայքով Ընդունելության կարժանանա.....

լույս՝ 11.09.19թ. Երևան

... Երկրի սրտից դուրս եմ, Գլխիս կավն անձրև է ուզում... Միտքս մազլցում է համոզումներին հոգեմաշ ծանր պատերն ի վեր՝ Իր հետ քարշ տալով ծանրացած հոգիս: Սլանում, բարձրանում եմ վեր Եվ վերևներում վերանում, Ապա միայն հետո որոգայթում Տրվելով ավյունով լի Ծանոթ լարի մեղմ նվագին... Մերկացած ժամանակն էլ Իր դերն է խաղում անվարձ, Սակայն պատռվում է աղե ապտակի պես Ու փոշիանում արցունքի տեսքով... Անորսալի խեղճավուն երանությանս խորքից Կրճատված տարածությանս զավեշտը Եռացող մռչցոցով Առճակատվեց նզովյալ անդորրին Եվ ճայթեց լույսը.....

31.08.16թ. Երևան

Մեր ամեն մի պատմությունն իր գերեզմանն ունի, Որտեղ չի լինում որևէ սգո արարողություն. Լուռ, անկկատ, առանց ձեռքեր ցեխտելու: Հոգու բուք լեռան ստորոտում Քնծիծաղի լայնքով մի փոս ենք փորում,

Ու անխնամ աղճատված հերյուրանքները մեր Հանձնում մեծ աղետի ծովին...

Ծայրահեղությունն իմ մեջ է...

Հոգուս դուռը լողովել Ու ինքնությունս կորչել է իսպառ: Թևերս պարաններ են դարձել, Փաթաթվել պարանոցիս՝ Չսպելով պատառուտված ձայնն ին՝ Ներսունս աղաղակներն Արժանանում են ծափահարություն-ների, Իսկ մեռնաճաշող հոգուս Լուսածին հայացքը կախ է: Միրոս առանց կորիզի մի լեռ է, Արևածագն էլ նրա ափերում չէ: Միտքս՝ լցված դանդաղ շնչով, Քչով է կարծես բավարարվում, Շատն էլ համարում է Անկուշտ միջուկիս համար ճիստը-թույն: Դողացող ձեռքերիս մեջ Անհանգիստ գլուխս արմատներ է գցել, Ու աչքերս էլ ջրում են նրան: Արդեն օդն էլ է խռով՝ Զի ցանկանում թակել դուռս: Կավաչեն մարմնումս հոգիս է հապա-ղում, Դատարկությունից կատաղած սիրտս Բողոքում է ամենուր: Է՛, լավ է լռեմ, Զէ որ ծայրահեղությունն իմ մեջ է...

Երևան 18.10.08

Ես նորից ընկա... Կանգնած բարձունքի եզրին՝ Հոգնել էի, ու հեռուներն էին ինձ ձգում... Ես նորից ընկա... Ներքևում անկոչ հյուր էի, Բոլոր մատարաններն էլ զբաղված էին: Ծմբված դեմքով ու խառնված մա-զերով Նրանց առջև քարացել՝ Նմանվել էի մաշված մի բաճկոնի, Որն այլևս կորող չի լինի: Շուրջս կանայք, Պլստան քնքշություն, Բայց, միևնույնն է, Ես քայլում եմ իմ մեջ Քո փողոցներում... Մեկ էլ հանկարծ Իմ վերևներից մեկը գոռաց. Իմացողների՛ն՝ հեռու տարածք, Ընտրյալներին անիրաբնակ Վերջին անհնարինը անողի ծաղկեա-սակ: Ականջներս փակ էին, Շուրջս՝ ապաբախտ կանայք, Գլխումս՝ իմաստից դուրս Զգնացողներին քարշ տվող ընթացք: Հոգ չէ իմ ժայռացած լինելը, Միևնու՛յնն է, Ես գնում-գալիս եմ իմ մեջ, Ու կամուրջներ պետք չեն ինձ, Որովիտես պրծել է Իմ կակազող վիճակը, Եվ հատկա խռով է իմ ոտքերից, Ես թռչում եմ, թռչում... Երևան 20.09.08թ.



ՏԵՂԱՏԱՐԱՓ ԾԱՌ ԿԱՍ ՆՐԲԻՐԱՆ ԲԱՈՒ

Գիրք. Նոր գիրքը ճանապարհ է դարձնում դեպի գիրքը և ընթացքը նրա կերպավորումի՝ բառերի չվերջացող շղթաներն ու ինքն ինքն թեթև թեթև կրկին ստուգելու խստությունն ու գործը միաժամանակ: Երբ տողը դիմանում է թո ախարակ ընկալմանը, երբ չես ընդվզում ասելիքիդ դեմ, չես սեղմում բացատները, վերջիվերջո դու ուղիղ ես նայում ապրումիդ՝ բանաստեղծության դեմքով: Եվ եթե գրքում երևացող բանաստեղծն է, ապա գրականության հետևաբանում խմբագիրը, որ կարող է պեղել անորսակին, ներապրել և որոշակի չափումներով համակարգել բանաստեղծական խոսքը: Այս դեպքում կարիքի հետևում չեղանքով երևանալու բանաստեղծ, թարգմանիչ Սլավի Ավիկ-Յարոնյանյանն է:

Զգիտեմ ինչու, չեմ սիրում, երբ գրքիս ծնունդը համընկնում է խոր աշնան կամ ձմռան ամիսներին: Թերևս այս մեկն էլ չորրորդը ԳԳՄ հրատարակչություն հանձնեցի աշնանը և ստովի հետաձգում էի նրա տպագրումը. թող հեռանա աշունը (2023-ի հոկտեմբերն էր), թող դեկտեմբերին էլ չլինի, թող ձմեռն էլ անցնի...

Գարունը գա, գարունն ինձ կհասկանա, և իրավ, գարունն ուր որ է կխփեր դռներին՝ ավետիս եկավ: Բջջայինս զնգաց, և այն ականջիս դեռ չնուստեցրած՝ լսում եմ եղվարդ Միլիտոնյանի՝ մեր գրողների միության նախագահի հնչելը ձայնը. «Սոնա ջան, ողջուն... և միանգամից՝ Սոնա ջան, գիրքդ լույս է տեսել, դու տեղյակ չես, ինչո՞ւ չես գալիս գրքերիդ հետևի... վաղուց է լույս տեսել, դեռ անցյալ տարի՝ դեկտեմբերին» (եղ անցյալ տարի՝ դեկտեմբերը սրտովս չէիմ, բայց ի՞նչ արած...) Ես անակնկալի եկած հարցնում եմ որտեղի՞ց իմանայի, պարոն Միլիտոնյան: Դեռ նոր իմացա, երբ Դուք ասացիք:

Եղվարդ Միլիտոնյանը միջբջջային տարածությունը ողողեց փունջ-փունջ շնորհավորանք-մաղթանքներով, և այս ամենն ավելի թնդեց, երբ նա լսափողը փոխանցեց «Բաց դռան» կամ «Դիցաբանական ապագա»-ի բանաստեղծին, մի խոսքով... Թե ինչպիսի՞ն է գրքիս շափկը, կազմարարական որակը... Ես անհետաքրքրամոլությունն ինձ հատուկ չէ, և անգամ մտովի չէի էլ ուզում պատկերացնել՝ մանուշակի թախտով ձեռքս կգա, թե՞ շոկոլադի թանձրով, միայն տողերիս զագոնները տրորված չլինեին, վայր չընկնեին... Բայց թողնեմ

գրքիս հայտնության առեղծվածը: Այնուհետ ես՝ այդ փրկվածը (գիրքս), հայտնվեցի Գագիկ Սարոյանի ֆեյսբուքյան «պրոֆիլում»... հայերենով կիսադեմ է հնչում: «Ֆեյսբուքյան կիսադեմ»... չէ՛, այն չէ: Այնտեղ տեղատարափ սկսվեց. Գագիկ Սարոյանը, որ հասցրել էր կարգալ, տեղեկացնում էր՝ «Շնորհավորեմք սիրելի Սոնա Անտոնյանին հրաշալի գրքի կապակցությամբ...», և ինքնաբերական մաղթանքների ու շնորհավորանքների հոսքը մի ինքնօրինակ շնորհամղեսի վերածվեց: Բանաստեղծ ընկերոջս անակնկալը օրս լցրեց. հաճելի էր: Ինձ դուր եկավ գրքիս հետ երես առ երես հանդիպումը, թեպետ պայմանական տարածքում: Ապրիլյան մի օր էլ եղբայրս՝ Արարատը, տուն բերեց բանաստեղծություններիս կապոցը: Ավելի ուշ Անդրանիկ Կարապետյանն ասելու է փոքրիկ գիրք՝ մեծ սիրո թերթերով... Իսկ Ռոզա Գրիգորյանը կասի՝ այս բանաստեղծությունների գրքով Սոնան շարունակ փորձում է մոտենալ, մոտենալ՝ մարդ էակին, մոտենալ ինքն իրեն, մոտենալ Աստուծո ներկայությանը...

Այստեղ իսկապես դադարներն են կարևոր... և ես արդեն որերորդ անգամ կխոստովանեմ. Ընկերներ իմ շքեղ ու պարզ, դուք անասելի եք՝ կմրմնջամ միշտ:

Սա գեղունային մասն էր, շարունակությունը հարցերն են: Բանաստեղծ Լևոն Բեժանյանը հարցնում է.

1. Ո՞ր բառը կամ բառերն են երևակում Սոնա Անտոնյան բանաստեղծի բնությունը:

Սոնա Անտոնյան - Չկա մեծանուն: Կան վիճակներ, ապրումներ և ժամանակ: Բառը թելադրվում է մերսից, զգացմունքն է սիրտ ու հոգի տալիս բառին, ապրումն է (չհորինված, չխեղաթյուրված) կրում ու երևակում բոլոր նրբերանգները, անգամ այն, ինչը դեռ փակ է, չի հնչում, բայց տողատակերում, լուրջան բացատներում դու գգում ես անասելին, ընթերցողս: Դուք ցնծության մեջ եք, եթե գգում եք, ես՝ նույնպես:

2. Բանաստեղծություն լավ ընկալելու համար ի՞նչ խորհուրդ կտաք պատանիներին (աշակերտներին), երիտասարդ ստեղծագործողներին և ընթերցողներին:

Ս. Ա.- Նախ շատ կարգալ. գիրք կարգալ, թե՛ համաշխարհային գրականություն, թե՛ հայ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործությունները, ընդհանրապես այսօր մեծ բաց է չկարդալը, գիրք չբացած և չբացող անհատը մեր օրերում... և՛ տխուր է, և՛ շատ վատ է...

Եթե խնդիր ասելիքն է, ապա ենթաշերտերը բազում են. մենք չենք կարող միևնույն ժամանակ մույնը զգալ, որովհետև մենք (ես, դու, մեկ ուրիշը) տարբեր թեքություններով տարբեր կերպ ենք մտածում, գգում երևույթներն ու իրողությունները: Բանաստեղծությունն էլ յուրօրինակ իրողություն է. ձևացնելու կամ բարդացնելու կարիք չկա: Քեզ համար, մյուսի համար հնչեցրու ճակատային հարցը՝

-Ի՞նչ է ուզում ասել...
-Ինչո՞ւ է ընտրել ասելիքի այս ձևը,

-լուծում է որևէ խնդիր, - ի՞նչ ինֆորմացիա է հաղորդում, թե՛ ինքնանպատակ է և այլն: Դասակ սահմանումները երևում են. չեմ կարող առաջարկել: Եթե դու չես հասցեատերը, հազար բանաձև էլ ասեմ անիմաստ է: Այս դեպքում էլ ժամանակն է շտկում. այո՛, ժամանակը:

Արձակագիր Լուսինե Աղաջանյանի մեկ հարցին կպատասխանեմ:

-Պատմիր քո մասին, Սոնա, մինչև տող դառնալդ ո՞ր տարեթիվն էր դու:

Ս. Ա.- Ոչ մեկը: Ես բնականն եմ անունը հոսք դիր, տեղատարափ ծառ, նրբիրան բառ... Մեղը, սահը տարե՞րք է...

-«Թափանցիկ ջղերով, թափանցիկ տրոփ, շնչահեղծ, թափանցիկ թախտ...» որո՞նք են «թափանցիկ» տրոփ ընդգրկման սահմանները Ձեր «ես այդ փրկվածն եմ» գրքում, ի՞նչ չափումների են ենթարկվում դրանք: Այս հարցը գրականագետ Կարինե Մարտիրոսյանն է հղել:

Ս. Ա.- Թափանցիկ են, բայց պինդ ու սլացիկ են տողերս, և ջիղս՝ աներեր: Այս գրքի ապրումն այն սահմանգրիմ է, որտեղ մենք բոլորս ՆՐԱ անունն ենք շնչում. իմացյալ անիմանալին է այնտեղ...

Չափումները միմիայն տիեզերական են:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ



ԱՐԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԽԱՂԱՍՈՒԸ

Կեսօր էր: Արևը, վաղուց ճեղքելով ամպերի ամրությունը, երկիր էր իջել և քնքշորեն գուրգուրում էր լեռների գագաթները: Արևի կրքից արթնած թաղաքը լողում էր բաց երկնքի տակ: Մարդկային աղմուկը հասցրել էր խաթարել թաղաքի անդորրը: Մեքենաների եռուզեռից այրվող ասֆալտից բարձրացող գոլորշին հասնում էր փողոցի եզրի շենքերի պատուհաններին: Աշխատանքային ժամը հատել էր պիկի շենքը: Խցանումները սկսել էին խոչընդոտել մարդկանց ազատ տեղաշարժը: Ես աչքերս բացեցի այն պահին, երբ արևը, սողոսկելով մաշված վարագույրի անցքերից ներս, խաղում էր դեմքիս: Զարմացած շուրջս էի նայում: Անկողնում՝ առավել ևս սավաճիս գույնը վաղուց մոռացել էի:

Տան պատերը սառն ու օտար էին: Առաստաղից կախված մի հին ջահ էր օրորվում, որը քիչ թե շատ ծանոթ երանգներ էր թարմացնում մթագնած հիշողությանս մեջ: Փորձում էի հասկանալ՝ երբ և ինչպես եմ հայտնվել անկողնում, բայց... Մարմինս ձգելով կիսապառկած դիրք ընդունեցի, սկսեցի շուրջս գննել: Սենյակի դուռը բաց էր: Շենքին կանգնած երկարամազ, թախտոտ աչքերով մի կին լուռ ինձ էր նայում: Նրա հայացքն այնքան արտահայտիչ էր, թվում էր՝ ողջ գիշեր անշարժ ինձ էր հետևել: Սաստիկ գլխացավ ունեի, որը, անխոս, խմիչքի չարաշահման արդյունքն էր: Լռություն էր, սենյակի պատերն ասես հալածում էին ինձ: Մեղավորության զգացումը, որը վատթարագույններից է կյանքում, սկսեց ճնշել ինձ: Մարմնովս դող անցավ: Քանի անգամ էի խոստում տվել ու դրժել, երդվել, հայհոյել և ի՞նչ... Ես նույն կարգավիճակում էի: Երկու պարզ աչքեր իմ պատճառով շարունակ վաճառում էին ժպիտն ու տեղ տալիս արցունքներին: Ես մնում էի նույն խենթը, որի հետևից տառապանքի մի մեծ հետք էր մնում: Այն մեծ անջրպետը, որ գոյացել էր մեր մեջ, վաղ թե ուշ պայթելու էր, այն ակամ էր, որի ռիսկերը ես հաշվի չէի առնում: Դոգեսպան լռությունը պատուհանի փեղկերի պես զարնվում էր կարծրացած սրտիս, փորձում վերականգնագնել մահացող զգացմունքներս...

Մարին, ինչպես աշնան դեղնած մի հասկ, որը գլուխը կախ շարունակ պայքարում է անձրևի ու քամու դեմ, դեռ դիմանում էր ինձ: Կնոջը բնորոշ էի վերջինս, նայելով աչքերս մեջ, սկսեց ցրել լռությունը.

-Բարև, Ավո, մինչ դու կեսգիշերային քո արկածներից զինով-ցած մահճակալդ էիր փնտրում, որը ժամանակին մեծ սիրով միասին էինք կիսում, ես իմ ապրումներից հոգնած հորդորում էի ինձ գուսպ մնալ, չխոսել: Նայելով քեզ՝ ես բախվում եմ լռության մի մեծ պատի: Ամեն ինչ կարծես քո հայացքի մեջ գրված է:

-Իրավացի ես, Մարի, ես գիտակցում եմ իմ սխալը, կյանքում միշտ մենք ունեք ընտրության հնարավորություն, ուղղակի պիտի կարողանանք ճիշտ պահին կանգ առնել: Ես խոստանում եմ վերջին անգամ:

-Վերջին անգամ, ի՞նչ հետաքրքիր է հնչում, Ավո: Գարնան անձրևների հետ մեր սերն էլ է վարարել, խառնվել անցած տարիների տիղմին ու նույն առվով հոսել: Ամեն անգամ, երբ այս տան պատերի ներսում հեռախոսի կամ դռան զանգ է հնչում, ես դիվահարի պես իմ հյուծված մարմինը փորձում եմ մի անկունում քողարկել: Դու ասես ուրվական լինես՝ հայտնվում ես լուսադեմին, անգիտակից և հեռանում անգիտակից, իսկ հիմա ասում ես՝ վերջին անգամ: Ես երբեք չէի ուզեցնա, որ իմ կյանքում ինչ-որ հատված կամ սիրուց ծնված, անեացած ինչ-որ բան լիներ վերջից կախված:

Մարիի պատրաստած ճաշի հոտն անգամ կշտացնող էր: Ես լուռ հետևում էի նրա ձեռքի շարժումներին: Ամեն գնով նա փորձում էր, որ իր պատրաստած բոլոր ճաշատեսակներից համտեսեն: Իսկ ես, ներքին վախերը սրտումս, սպասում էի, որ հեռախոսը չզանգի, զոհն այսօր տանը մնամ:

Օրը մաշվում էր ժամանակի մեջ, երեկոն աստիճանաբար իրեն տեղ էր ազատում, մենք խոսում էինք, քննարկում, երբ անսպասելի լսվեց դռան զանգը: Նույն պահին մեր հայացքները կանգ առան դեմ դիմաց: Ես նկատեցի՝ ինչպես Մարին մի ակնթարթում սփթթեց: Ես գիտակցում էի՝ ինչ է լինելու մի քանի վայրկյան հետո: Դուռը բացեցի. Արևն էր: Ներս հրավիրեցի, նա մերժեց: Ես հասկացա, որ լեռնալանջից պոկված ձմափայտի պես այս իրավիճակը թույլտրեցի ընթացքում լափելու էր իմ ընտանիքը: Իմ բոլոր խոստումները զլրկվում էին ծյան հետ և մնալու էին նրա շերտի տակ: Նա մի քանի բառ շնջաց ականջիս և դուրս եկավ: Դուռը առանց փակելու հայացքս շրջեցի դեպի սեղանի շուրջը նստած Մարիին: Արցունքներն անմայն, իրենց ճանապարհի հարթելով, թրջում էին դատարկ ակիսներ:

Չամարձակություն չունենալով մոտենալ, գրկել նրան, ընդամենը արտաբերեցի, որ մեկ ժամից տանը կլինեմ, մեկ ժամից կարծես ինքս էլ ասածիս չհավատալով:

Մինչ տղամերը մեքենան քշում էին մեզ այնքան հարազատ խաղատան ուղղությամբ, ես անբնական լռությամբ էի պարուրվել: Առաջին անգամ Մարիի արցունքոտ աչքերը սկսեցին ճնշել ինձ: Սիրտս սկսեց արագ աշխատել: Տղամերը ջանասիրաբար միմ-

յանց էին փոխանցում լցունված ծխախոտը, մեքենայի մեջ տարածվում էր թարմ կանեփի հոտը, և մեծ հաշվով մեկ էր՝ ես ուրախ էի, թե մտահոգ: Մենք արդեն խաղատանն էինք, երբ անբնական զգացողություններ սկսեցին ինձ տիրել:

Այդ երեկո ծովը վարար էր, ալիքները մեծ էին, գիշերը անհամաչափ: Մարիի աչքերը ամեն ինչ կարծես կանխորոշում էին, իսկ մենք առազաստները փոխելու փոխարեն նետվում էինք բաց ծով: Ես կարծես անջատված լինեի, Մարին վերցնականորեն փոթորկեց ներաշխարհս: Տղաների ձայները զնալով բարձրանում էին: Ուշադրությունս շեղվեց նրանց ձայնից.

-Վաղը նշված ժամին, Արո:
Լռություն էր: Գունարի չափը լսելուց պապանձվել էի: Որտեղից էինք տալու: Պարտքը ինչքան Արոյին էր, նույնքան էլ՝ իմն ու Արտակինը: Իսկ ես Մարիին խոստացել էի մեկ ժամից վերադառնալ, իսկ լաբիրինթոսում այդպես էլ լույս չէր երևում: Արոն, դատարկելով բաժակի պարունակությունը, ձեռքը խփեց սեղանին.

-Ասացի՛ կտամ:
-Վա՛ղը, Արո:
Աղմուկն աստիճանաբար նոր թափ հավաքեց, հրմշտոց սկսվեց: Թվում էր՝ վեճն ավելի մեծ ալիք է հավաքելու, սակայն թույլտրեց անց քար լռություն տիրեց: Սենյակում միայն գետին ընկնող փամփուշտի ձայնն էր լսվում: Սեղանից քիչ հեռու գոյացած արյան շիթը տարածվում էր հատակով մեկ: Մարմինս սառել էր, լեզուս պապանձվել, բոլորը քարացել էին, միայն թույլտրեց անց կարողացա գոռալ՝ Արո՛...

ԿԱՄՐՁԵԼՈՎ ԱՆՅՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱԼՆ

Գյուճարու պետական բժշկական քոլեջում հուլիսի հինգին խնկարկվեց հիշատակի բուրվաճար՝ նվիրված քոլեջի (նախկինում՝ Լենինականի բժշկական տեխնիկում՝ 1937թ.) հիմնադիր տնօրեն Մովսես Միքայելի Պողոսյանին: Զուգաբանողակի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին Գյուճարու համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Սամոյանը, գլխավոր ճարտարապետ Զենիկ Գասպարյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Զանոյանը, Մովսես Պողոսյանի որդիները, հարազատները, պատվարժան հյուրեր արտերկրից և այլք: Զամայնքային իշխանության ներկայացուցիչները կարևորեցին Մովսես Պողոսյանի ավանդը կրթական օջախի ստեղծման և կայացման գործում, խոսեցին այդ կարևոր ոլորտում ունեցած նրա ներդրման և վաստակի մասին: Միջոցառումը, որին մասնակցում էին

քոլեջի լավագույն ուսանողները, շարունակվեց դահլիճում. այն շատ հուզիչ էր, հուշեր արթնացնող և պարտավորեցնող, քանզի մարդն իր գործով կամրջում է անցյալն ու ներկան և լուսավոր հետո թողնում հոննիս հետո:



Մովսես Միքայելի Պողոսյանը ծնվել է 1911թ Լեռնային Ղարաբաղի Մեծչեն գյուղում: Ծննդավայրը հարուստ և գեղեցիկ բնություն ուներ, ծաղկաշատ այգիներ, սառնորակ աղբյուրներ, այստեղով էր հոսում թուրքառ գետը: Մովսեսն ցուրտը լիքն էր բնության բարիքներով և ընկույզի ծառերով: Այդ ծորը կոչվում էր «Ճողպուտ», այսինքն՝ շատ ընկույզներ: Անկաշկանդ մանկությունը, նրա նկատմամբ անսահման սերը ընտանիքի աննակրտսեր զավակին տվել էր Ղարաբաղի չքմաղ բնության կերտվածք, առնական երիտասարդի գեղեցկություն՝ բարձրահասակ կեցվածք, զանգուր սև մազեր, գեղեցիկ աչքեր և մեղմ ժպիտ: Մանկության տարիներին սիրել է փոքր հովվի դեր կատարել, հորթերը, գառները արոտ տանել և վայելել բնության գեղեցկությունը, ծաղկաշատ անտառները, որտեղ մտնողը հագնում էր վայրի պտուղների առատությունից, մոշի ու զկեռի համից: Որքան մոտ է մարդը բնության կերտվածքին, այնքան ազատ է ու անաղարտ: Գյուղում դպրոց չլիներ և պատճառով նա սովորում է մոտակա գյուղի դպրոցում, չարածճի, բայց շատ սիրված ու ընդունակ աշակերտ է եղել, գրել

է ոտանավորներ, փոքրիկ պիեսներ, և ինքն էլ խաղացել է տարբեր դերեր: Գեղարվեստի սիրահար էր: Թե՛ ծննդավայր Արցախում, թե՛ Բաքվում անցկացրած ուսումնառության տարիներին բանաստեղծություններ էր գրում, Գարեգին Սևունցի հետ գրական խմբակի հիմնադիրն էր: Երազում էր Զայաստան գալու և երևանի պետական համալսարանի բանասիրական բաժնում սովորելու մասին: Բայց ավագ եղբայրը Մոսկվայի բժշկական ինստիտուտի ուսանող էր, և ծնողները, զավակների նույն քաղաքում ուսանելը նպատակահարմար համարելով, համոզում են նրան Ռուսաստան մեկնել: Ծնողների ու եղբոր հորդորանքներին տեղի տալով՝ Մովսեսն ընդունվում է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի բիոքիմիայի բաժինը: Զամալսարանն ավարտելով՝ երիտասարդ մասնագետը խնդրում է գործուղել իրեն Զայաստան: Այստեղ էլ Մովսես Պողոսյանին նշանակում են Լենինականի նորաստեղծ բժշկական տեխնիկումի տնօրեն: Երիտասարդ Մովսեսը, զինված

ված հարուստ գիտելիքներով, հարկ է համարում Մոսկվայի փորձը փոխանակել սկսում է նոր ձևով կահավորել հանրակացարանները, ուսանողների համար կենցաղային լավ պայմաններ ստեղծել: Մովսես Պողոսյանին շատ են սիրել և հարգել որպես օրինակելի տնօրենի, գիտելիքներով հարուստ դասախոսի և լավ մարդու: Մովսես Պողոսյանի կյանքն ունեցել է փիլիսոփայական խորք. նա խորապես ապրել է կյանքի վերելքներն ու վայրէջքները, ճաշակել դառնության համն ու ուրախության բերկրանքը: Սիրելով մարդուն ու ճանապարհ գտնելով կյանքի լաբիրինթոսում՝ նա օգնել է մարդկանց, սերունդներին պատգամելով՝ գնահատիր քեզ տրված աստվածային պարգևը, որ կոչվում է կյանք, սիրիր քո հայրենիքը, ճանաչիր ինքդ քեզ, որպես լույս ճառագիր մարդկանց համար, գնա՛ դեպի լույսը, որ եղիցի լույս: Այսպիսին էր Մովսես Պողոսյանի անցած ճանապարհը:

Մուսաննա ՎԻՐԱՔՅԱԼ

ՄՐԲԱԶԱՆ ԴՈՂ



ՄԵՐԻ ՏԵՐ-ԱՎԱԳ-ՅԱՆ

Ես Մերի Տեր-Ավագյանն եմ, 23 տարեկան: Ավարտել եմ ԵՊՀ Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի Զանրային կառավարում բաժինը: Ատեղծագործել սիրել եմ դեռ մանկուց, կարծում եմ՝ արվեստը ինքնարտահայտման լավագույն միջոցն է, այն կողպեք է, որը բացելով՝ կբացահայտես ինքդ քեզ:

ՄՐՏԱՄՎԱՆԻՍ ՎՐԱ ԿՈՏՐՎՈՂ ԶԱՅՐԵՆԻՔ

Մի պայթյուն լսվեց մեծ մարտի դաշտում, Որ պիտի դառնար պատճառ պոռթկումի, Զենց նրանք էին՝ որդիք Վահագնի, Որ, ամպրոպածին կուրծքը պատռելով, Պիտի նետվեին բոցաշունչ կռվի: Եվ միայն արդեն վաղորդայն հովիհ Արևակիզված լեռները հայոց Դատապարտված էին զրնգալ ուժգին Ազդարարելով փառքը հաղթողի... Թե՛ ժ կռվից հետո կառավորանա, Արյունակակաչը նորից կծաղկի Զո հոգու համար,

մարտիկ պայքարի: Դուք ընկաք գարու հատիկների պես, Բայց չէ՞ որ ծիլն է անխուսափելի: Այդ է պատճառը, որ հայի ոգին երկաթքետոնե ժայռերի միջով Ջարդում-անցնում է Սրընթաց արծվի սկայքի թևով... Ոգին է հոսում քո երակներում, Դու անգիտակից կրում ես նրան, Բայց երբ լեռներում՝ սահմանագրին, Բուք վտանգի մահաբույրն էս զգում, Զորդում է քո մեջ հաղթողի գինին, Իմ Վահագնածին, իմ Մոնթեաշունչ, Դու խենթ Նժդեհի զավակ արժանի:

«ԶԻՐՈՒՐ ԽԵՂ»

Զոգիս կարկատեն քո հոգու փեշին, Եվ սարի փեշին պարենք ազգային պարերը մեր հին՝ Զատուկ մեր ազգին, Որ միասնության ծայրը որոտա, Խփի լեռներին և պատռի հողը՝ Մատնանշելով հայ տղամարդու պատիվն ու ուժը. Ասում են իբրև, թե հայը պարի՝ Զողը կտնքա և կհառաչի: Եվ որոնումները հասան այն կետին, Որ գտա այն հին, դարավոր ոգին, Որ խենթ գոռում էր «հիրուր խեղ» ուժգին... Ներարկեն հոգիս բջիջներիդ մեջ Եվ ներկեն ներկաղ բոցավառ լույսով, Որ վաղվա օրը հայինը լինի, Որ հայ մանուկը չապրի արտերկրում, Եվ միասնության միտքը շղթայեն ամեն հայի մեջ, Մեր հայրենիքը սրբություն է վեհ, Որ պարտական չէ ո՛չ քեզ, ո՛չ էլ ինձ, Բավ է տարափը դավաճանների,

Զայրենիքը շեն է շնորհիվ քաջերի:

ՃԵՐՍԱԿ ԱՂՈՒՆԻԿ

Արևը ծագեց իմ սրտի միջից, Եվ սիրտս ծակվեց արևաշաղախ, Որ հոգուս դիմաց պատնեշ չդնեմ Ու չսահմանեմ ինձ չակերտներով: Ներդաշնակության արևը գտնեմ, Վազեն նրա հետ երկնքից այն կողմ, Տիեզերք մտնեմ և մտնեմ իմ մեջ: Մտնեմ, փորփրեմ էջերը կորած և պատառոտված, Որոնք կորան տարիների հետ, տարիների մեջ... Եվ ո՞վ է կանգնած հիմա իմ դիմաց, Գլուխը կախած իր խղճի դիմաց... Մեղքն է ծորում մարդու աչքերից, Ա՛խ, այդ դարավոր ստահակը նորից Ադամի միտքն է կրծում արմատից, Իսկ իմ դիմաց հայելին էր դրված: Զարկ գավազանդ դու քո բարձունքից, ամենագոր՝ Տեր, Եվ համիր աշխարհը չարքի երախից, Պաշտպանի՛ր միտքը կարծրացած սրտից, Կեղծ, օձալեզու «հավատացյալից»:

Եվ տեսա ես ամենքին Ամենքում մի աղունիկ, Աղունիկը խիղճն է մեր, Այն ապրում է մեր հոգում, Զոգուդ մեջ է, չե՞ս տեսնում, Իր աչքերն է լայն բացել, Մարդու կերպարանք ստացել, Թափ է տալիս մատը, տես, Զայրանում է քեզ վրա, Թե ինչո՞ւ ես արնոտել Թևը ճերմակ, մարմարյա... Լույսը բացվեց՝ սպառվեցի, Կամ մտքերս հանգեցին, Պատուհանից նայեցի՝ Նույնիսկ օդն էր լուս առել, Իսկ միտքս լույս էր փնտրում Այս ծաղրական լույսի մեջ:

ԵՐԱԶԻ

Գալիս եմ, բախվում ալիքներն իրար Եվ ծառանում են՝ շիթ-շիթ հոսելով, Բախվում է միտքս հոգուս ակամա, Եվ աչքերիս դեմ ի չիք է դառնում Զորիզոնն իսկույն: Մեռնող արևի վերջին շողերով Ես կողողեմ ուսերս հոգնած, Կնայեմ հեռուն՝ շեկ մայրամուտի Բեղուն արգամոդից ծնված նորածնին: Գեղաշյա ծովին: Եվ ծովը ծնվեց երազով անհուն՝ Աչքերը հառած երկնքի մովին, Կապույտը դարձավ նրան հովանի, Եվ ծփաց ծովի ալիքը հուռթի: Խաղաղ էր ծովը մտքերիս նման, Բայց կալեկոծվի ուշ թե շուտ դարձյալ, Եվ այն կծնի մի նոր պատանի Որ ալեկոծված մայրամուտ գովի: *** Թախծամորմոք, հրդեհակիրք երազանավ, Երկու բաժակ պարզ, թունդ գինի Եվ աստղաթափ երկու հոգի: Մահացության ալիքի մեջ կա՞ սպեղանի, Թե՞ դառնության արյունարբու Քամիներին ենք մենք գերի: Վերացումի անհայտ ուղով Սլանում ենք մեր բութ կյանքում Եվ ավարտին հանդիպելիս ուշաթափվում: Ես արբա՞ծ եմ քեզնով գուցե, Թե՞ լոկ կյանքն էր պանդոկապան, Ասպնջական և ձեռնբաց: Երակիցը քամված գինին Լուռ լցնում էր ու ծիծաղում: Փող չէր ուզում, զարմանում էր,

Սակայն միայն վաղը պարզվեց Գինարբուքի գինը հստակ: Պարտքս ու սերս փոխհատուցվեց Իմ արցունքի ծովով միայն:

ՅՈՒՈՒ ՈՃԻՐ

Պիղծ, հոգեթախիծ հույզեր ամբարած, Լքված, անտեսված այնպես հեշտագին, Որ ցանկանում ես ոռնալ տակավին: Սատանա կերած մարդկային կերպար, Ծախե՞լ ես խիղճը Եվ դարեր առաջ, և՛ դարեր հետո, Այս հառաչանքի խուլ խաչմերուկում հայտնվում եմ ես Եվ մեջչանակական հզոր թախիծով, Ինձ հարվածելով իմ քարափներին, Փորձում եմ ճեղքել պատը լռության: Այս մեղսամակարդ աշխարհի եզրին Քո սովերն է, որ ինձ փրկում է անվերջ, ամենագոր՝ Տեր: Ո՞վ այս աշխարհի խղճի կաթսային չարիք կաթեցրեց՝ Ընթերանելով խղճի ակունքը Եվ անապակ մեր հոգիներին, Տխեղծ ժպիտով բարի լույս մաղթեց: ***

Երբ հոգուդ ծաղկունքը սկսի թառամել, Ես կհասկանամ՝ դու նյութականն ես դասել առավել:

Գալիս եմ, բախվում ամբոխներն իրար Եվ պատերազմում չգիտես ինչու, Թե՞ ինչ-որ մեկի շան լափամանից Զացն էր պակասել չգիտես ինչու:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



այնպես ալ պիտի սորվիս լռութեան մէջ հանգիլ

2023-2024

անդերծան ասեղդ կը բռնես ու յոյսի պարկոյ կը կարկատես յոյսի մաշած պարկոյ կամ մաշած յոյսի պարկոյ

անոյժ մատներով կը փորես շարունակ կը փորես կը փորփորես ոչ ելքի ծակը գտնելու այլ լոյսի բարակ շողը գրկելու

ՄՆՈՒՇ ՆԱԳԳԱՇԵԱՆ

ԿԵԱՆՔՍ...

Կեանքս շատ է նման ծովուն, Մերթ պլեկոծ եւ մերթ խաղաղ, Շատ բան գնաց փրփուրին հետ, Շատ բան մնաց տակը ջուրին... Ոմանք անցան, անտեսեցին, Լոկ փրփուրով զնայեցան: Բայց ուրիշներ լուրջ ու խոհուն՝ Մարգրիտ գտան խորը հոգւոյս... Մերթ պլեկոծ, թէ մերթ խաղաղ Աստուծոյ Աջքն է մի՛շտ վրաս:

06 Օգոստոս 2023

ԱՓ ՄԸ ԱՐԵՒ

Ափ մը արեւ բաւական է, Ափ մը արեւ սրտիս չափով, Որ չմըսիմ այս ցուրտին մէջ:

Սրտիս չափով ափ մը արեւ Բայց սրտիս խոր, անհուն սիրով, Ջերմացնելու աշխարհին անսէր: Ափ մը արեւ սրտիս չափով...

11 Օգոստոս, 2023



կոճակ օղակ կոճակ կոճակ օղակ մէկիկ մէկիկ օղակելով բարձրացար ապա օղակ կոճակ օղակ կոճակ մէկիկ մէկիկ արծակելով խոնարհեցար

ճամբադ երկարեցաւ մախաղդ պարպուեցաւ իսկ դուն սպառեցար ու տեղ չհասար նստար քարին հանգստացար ու բոլորին ցոյց տուիր տեղ չհասնող ճամբան

Ժամը կը հարցնես պատասխանը կը ստանաս ու կը զարմանաս թէ կեանքդ ինչպէ՞ս այսքան շուտ անցաւ

վերջապէս կոնակէդ բեռը կը հանես ու միայն ծանրութիւնը կը պահես

անմեկան գրիչդ կը բռնես խաբբուած թուղթի մը վրայ հինգ վեց տողով նամակ մը կը գրես սակայն չես գիտեր սա նամակդ արդեօք որո՞ւն առաքես նամակի թուղթը կը ճմռթկես անմեկան գրիչդ անդին կը հրես ու վերմակիդ տակ կը մտնես ոտքերդ ալ ինչպէս միշտ վերմակիդ տակէն դուրս կը հանես ահա հիմա պառակտուած կարկատուած սակայն հարազատ վերմակիդ տակ ոչ կրնաս քնանալ ոչ կրնաս արթննալ հինգ վեց տողով ճմռթկուած նամակ

հինգ վեց տողով նամակ

դուն բոլորին մէջ բոլորին հետ սակայն բոլորէն հեռու շատ հեռու

կը հեռանաս աղմուկէն սին ու լռութեան մէջ կը գլորես գանձի նման պահած արցունքներդ ժառանգած

ինչպէս որ սորվեցար աղմուկին մէջ ապրիլ



ԼԵՌՆԱ ԳԱՐԱԳԻԹԻԻՔ ՏՈՂԱՆՅՔ

Բազում են կայարաններ կը սպասեն անցորդներու մերթ բաժանման մերթ ողջագուրման ի վերջոյ երկու գծի վրայ գնացքը կը սողայ: Ժամն է ահա ճամբորդութեան պահ մը սիրելիներ կը հեռանան պահ մը հարցեր կը բարդանան. ծանօթ անծանօթ ճամբորդներու կը սպասեն գծին վրայ գնացքներ. երկաթը շէկ կը տաքնայ:

Երբ գանգը հնչէ կեանքը ձեռքերու մէջ թելերու փարած շալակի մը բեռ դարձած կը հեռանայ:

Մա՞րդը թէ՛ ժամանակը կը սահի դէպի յառաջ. մերթ անուրջ մը մերթ սին պատրանք:



ՄԱՐԻՄՆԱ ՊԷՐԹԻԶԼԵԱՆ

ԿԸ ՀԵՏԵԻՆՔ ԻՐԱՐ

Օդին մէջ Արեւնուտքէն արեւելք Կ'անցնինք անարգել սահմաններ Օրը տօն է Ծաղկազարդ Ծառազարդ գարուն Աստուածորդին մուտք կը գործէ Երուսաղէմ Ես՝ խաղաղ ովկիանէն Դէպի անխաղաղ սուրիական ցամաք կը շտապեմ Ծեր հայրիկս վերջին անգամ գրկելու Աստուածորդին ձիթեմիներով դիմաւորելու...

Ես՝ ինքնաթիռի քանակին Դգօրը՝ խոնարհ իշուկի մը վրայ Կը հետեւինք իրար քայլերուն Ես՝ Անոր շաւիղներուն Ան՝ իմ ապահովութեան Թիկնապահի զգուշութեամբ... Աջ ու ձախէն որսորդի որոգայթ Կը գլորին մարդիկ Կը թօթափեն ոտքերուս փոշին Մինչ արեւը մայր կը մտնէ... Կը սպասեմ իր գալստեան Այս անգամ՝ արեւելքէն արեւմուտք Մինչ կը հետեւիմ իրեն...

24 մարտ 2013



ԱՐԱ ՃՈՒՀԱՐԵԱՆ

ՔԱՄԻՆ

Երբ քամին ճօճեց մեր պարտեզին ծառերը տերեւները չգիտցան - թէ ես եւ դուն տերեւ էինք Երբ քամին ցնցեց մեր կղզիին սահմանները արմատները չգիտցան - թէ ես եւ դուն արմատ էինք Երբ քամին վերծանեց մեր անունները պտուղները չգիտցան - թէ ես եւ դուն պտուղ էինք չգիտցան-աւաղ չգիտցան

ԱՄՊԸ

քամին ամպ մը բերաւ եւ դրաւ իմ եւ արեւին միջեւ ինչո՞ւ քեզի ըսէի թէ ամպ մը չկրնար պահել ճշմարտութիւն մը

Նախ պէտք է գտնել հեռածայնի թիւը ճշմարտութեան ապա ժամադրութիւն առնել ճշմարտութեան քարտուղարէն գիտնալու համար հասցեն ճշմարտութեան հասնիլ վայրը հասցէին վերջապէս - փնտռել դուռը ճշմարտութեան եւ այս ամենէն դժուար մասն է այս ճամբորդութեան

ՊԱՏԵՐ

քամիներ չկրցան տապալել պատեր եւ մեր սերերը ապրեցան պատերու մէջ պատերու մէջ - պատերու մէջ մեր սերերը ապրեցան պատերու մէջ -

որովհետեւ անոնք ծնած էին պատերու մէջ - պատերու մէջ

ՅԱՂՈԱՆԱԿ

անկարելի է քեզ կորսնցնել նոյնիսկ ամենախիստ քամիներուն մէջ որովհետեւ ես պարզապէս չեմ գտած քեզ եւ չգտնելու այդ յարթանակը կ'ուզեմ քեզի նուիրել ես



ՀՐԱՆԳ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԱՔՍՈՐ

Աքսորեալ ենք օրերուն մէջ մեր անցեալի, Աքսորեալ ենք յուշերուն մէջ մեր հէզ կեանքի, Աքսորեալ ենք երազներուն մեր աշխարհի, Աքսորեալ ենք մեր տենչերուն մէջ քարացած եւ երգերուն, որ երգեցինք հասցնելու անէացած... Աքսորեալ ենք թէ՛ կատարուած, թէ՛ անկատար մէջն օրերուն շղթայ կազմած... Աքսորեալի աչքով հիմա ետ կը նայինք կիրք ու սիրով, խենթ տենչերով արահետին մեր անցեալի, Մեղմ կը ժպտինք կատարուածին եւ... կ'ափսոսանք անկատարին... Անօգնական... Անօգնական... Աքսորեալ ենք երէկներուն մէջ դալկացած... Ներկան մռայլ,

Իսկ ապագան պարոյկներու ալիքներով մշուշածածկ մթութիւն է Ովկեանոս է հորիզոնուած, ո՛չ փարոս կայ, ո՛չ ալ դարձի յստակ ճամբայ... Աքսորեալ ենք անորոշի յորձանքներուն փրփրապակ... Ժամանակը շղթայակապ մեզ կը տանի անորոշի մութ ծալքերուն, հոն կը ստեղծենք նոր աշխարհներ եւ կ'աքսորենք մեր հէզ հոգին մութն ու լուսուն... Աքսորեալ ենք կաղապարին մեր անձնութեան...

Եւ ծիրին մէջ անվերջ դարձող, Մենք կամաւոր ճամբորդներ ենք... Աքսորեալ ենք մեր իսկ գոյին...

Էջը կազմեց Նուրեմ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: